

9847

3 K C u C l

H - 64

ԲԴ

ՍԵՐ ԱՎԱԳ ՅԵՂԻՔԱՅՐՆԵՐԸ—

ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆՆԵՐԸ

623

3ԿԾՄ

4-64

ԽԱՀՄ ԺՈՂՈՎՐԴԻ ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ

1927

29.154.

Լ. ԿՈՒԵՍՆԻԿՈՎ

24 SEP 2006

68

ՅԿԵՄ

4-64

ՄԵՐ ԱՎԱԳ ՅԵՂԻՑՅՈՒՆԵՐԸ—
ԿՈՄՅԵՐԻ ՏԱԿԱՆՆԵՐԸ

(«Խարույկի մոն» գրոյցներից)

Ոռևո. թարգմ.
ՄԻՄ. ՀԱՄԱԼՅԱՆ

622

ԽԱՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՔՈՂՈՎՈՒԹՅ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՄԱԿԱՈՒԹՅՈՒՆ

ՍՊՈԿԿԱ 1927



22 MAY 2013

9847

Напечатана в типографии Госиздата
„Красный Пролетарий“. Москва,
Пименовская ул., д. № 16,
в количестве 4000 экз.
Главлит № 64097.



4194-91

Խարույկը չկար: Կոմյերիտական բջիջի ընդարձակ, տաք սենյակում, վորի պատերը զարդարված եյին կարմիր կտորի շերտերի վրա նկարված տասնյակ գունեղ պլակատներով ու լոգոներով, խարույկ հարկավոր չեր: Ճիշտ ե, փողոցում ճարճատող սառնամանիք եր, ուղեկտուրներում միլիցիոներները խարույկներ եյին վառել և տաքանում եյին միրուքավոր կառապանների ու պատահական անցորդների հետմիասին: Սակայն դա փողոցումն եր. սենյակում, ինչպես ասացի, տաք եր. իզուր չեր, վոր պիոներներից մի քանիսը խոնվել եյին դռան մոտ, վորտեղից փչում եր սառնորակ ողի հոսանքը: Պիոներները շատ եյին: Զրույցը կոմյերիտականների մասին հետաքրքրում եր բոլորին: Զե՞ վոր նրանցից ամեն մեկը հույս ուներ վաղ թե ուշ ամրացնելու յուր շապիկին կամ կուռտիկին ԿիՄ-ի նվիրական նշանը: Հետաքրքրությունը կրկնակի յեր դառ-

Նում նրանով, վոր զբույցը անցկացնողը հին
կոմյերիտական եր, կոմյերիտմիության հիմ-
նվելու որից նրա շարքերում յեղած ու անցած
այն ամբողջ դժվարին ու հերոսական ճամբան,
վոր անցել եր կոմյերիտմիությունը։ Անշուշտ
նա կարողանա պատմել կոմյերիտմիության ու
կոմյերիտականների մասին ամենագլխավորը,
ամենաեյականը։

Պատմողը արտաքինով աննշան, գանգրահեր
մի յերիտասարդ եր, նիհար, շարժուն դեմքով
ու մոխրագույն, ուշադիր, ասես մարդկային
սրտի խորքերը թափանցող աչքերով։

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՐԱՆԻ ՄՈՏ.

— «Դուք բոլորդ գիտեք, — սկսեց պատմողը, —
վոր կոմյերիտմիությունը կամ յեթե խոսքերը չկր-
ճատենք՝ Յերիտասարդության կոմունիտական
Միությունը, Համամիութենական կոմյերիտմիու-
թյունը (վորովհետև կոմյերիտականներ կան և
ուրիշ յերկրներում) գոյություն ունի ութը
տարուց ավել։ Բայց ի՞նչպես եր ապրում նա
այդ ամբողջ ժամանակաշրջանում։ Արդյոք հենց
սկզբից նմա՞ն եր նա այսորվա ահագին կազմա-
կերպությանը մեկ ու կես միլիոն անդամներով։
Արդյոք այս ամենը գիտե՞ք դուք։ Պիսներները

շփոթվեցին. նրանցից մի քանիսը պատրաստ
ելին կանչելու. «գիտենք», բայց իսկույն ուշքի
յեկան. Ճիշտն ասած, վոչ վոք չգիտեր կարգին
այն, ինչի մասին հարցնում եր պատմողը։

— «Ե՞ն, վոչինչ, — հանգստացրեց նա, — յես
ձեզ կպատմեմ։ Սկսեմ վաղեմի ժամանակներից։
Արդեն գրեթե յերեք տարի շարունակվում եր
պատերազմը գերմանացիների հետ։ Պետրոգրա-
դում (վորը լինինի մահվանից հետո վերանվան-
վեց լենինգրադ) բանվորների անբավականու-
թյունը աճում եր։ Հացի հերթերում հաճախ կա-
րելի յեր լսել, թե ինչպես բանվորների ու զին-
վորների կանայք անիծում են կառավարությունը։

— «Ամուսիններիս կովի քշեցին, հաշման-
դամ են դարձնում, սպանում, իսկ մենք այս-
տեղ սովոր ենք կոտորվում։»

Իմ մեծ յեղբայրը, վոր հազիվ տասնըվեց
տարեկան լիներ, աշխատում եր այն ժամանակ
գործարաններից մեկում։ Նա յեր մեր ընտանիքը
կերակրողը. հայրս արդեն վաղուց գերի յեր
Գերմանիայում։ Մի քիչ ել յես եյի ոգնում՝
լրագիր վաճառելով Պետրոգրադի աղմկոտ փո-
ղոցներում։ Լրագիրը պատրաստակամությամբ
վերցնում եյին, հուսալով իմանալ վորկենորու-
թյուն ճակատի դրության մասին, և յես վաս-
տակում եյի յեղբորիցս վոչ պակաս, Հաճախ

աչքի անցկացնելով մոտս մնացած լրագրները՝
յեղբայրս սպառնում եր թագավորին ու բուր-
ժույներին նրանց իշխանության մոտալուտ վախ-
ճանով։ Յես չեյի սիրում վո՞չ թագավորին և
վո՞չ ել բուրժույներին՝ ճարպոտ, մաքուր պա-
րոններին, վորոնք ճակատ չեյին ընկնում, այլ
հանգիստ նստում եյին տաճը։ Միայն մայրիկա-
տքնում եր յերկուդով—հենց այդպիսի խոսքերի
համար՝ հայրս շատ անդամ եր վոջիլ կերակրել
ցարական բանտերում։

Մի յերեկոյեղբայրս յեկավ հուզված, ուրախ։
— «Սկսվեց»—կանչեց նա։

Սկսվեց հեղափոխությունը։ Թագավորի հա-
շիվը շուտով փակեցին. միայն շան պես հավատա-
րիմ վոստիկանների մի փոքր խմբակ փորձում
եր պաշտպանվել՝ տանիքների տակ պահված։ Զին-
վորները միացան բանվորներին։ 1917 թ. մարտին
Արյունոտ Նիկոլայը գլորված եր իր գահից։ Բայց
սա հեքիաթի նախաբանն ե միայն. հեքիաթը
դեռ առաջևերիս ե։ Հենց վոր թագավորին տառ-
պալեցին, պարզվեց, վոր այդչափ միահամուռ,
հանուն ազատության կովող «ժողովրդի» մեջ
կան զանազան կարծիքներ։ Բուրժուաներն ու
նրանց արբանյակներն ամեն կերպ պնդում եյին
թե այժմ պետք ե պատերազմել ու պատերազ-
մել։ Բոյլշէկները պնդում եյին, թե բանվոր-

ները պետք ե ձգտեն խաղաղության, վոր նրանք
իրենց վիճակից թագավորի հետ միասին պետք ե
գեն զցեն և ճնշող գործարանատերերին։ Սկսվե-
ցին վեճերը։ Ամեն որ սարքվում եյին միտինգ-
ներ, ուր բանը համարյա կովի յեր հասնում։
Յես, իբրև լրադրավաճառ, շատ շուտով հասկացա-
թե ում կողմն են բանվորներն ու զինվորները.
Նրանք միշտ բոյլշէկիկան լրագիր եյին վեր-
ցնում, այնինչ մաքուր հասարակությունը պա-
հանջում եր այնպիսի լրագրներ, վորոնց մեջ
խոսվում եր «մինչ հաղթական վախճանը» պատե-
րազմի մասին, և ուր բոյլշէկները նկարագրվում
եյին իբրև գերմանական լրտեսներ, վոր վար-
ձկած են Ռուսաստանը վոչնչացնելու համար։

Յեղբորս սկսեցին այցելել նրա ընկերները։
Խոսում եյին այն մասին, թե բանվոր յերիտա-
սարդությանը ևս, հասակավորների որինակով,
պետք ե միանալ, կազմակերպել յերիտասարդա-
կան միություն։ Տաք, աղմկալի վիճաբանու-
թյուններ եյին տեղի ունենում։ Վոմանք պըն-
դում եյին, թե անհրաժեշտ ե անմիջապես միա-
նալ բոյլշէկներին, մյուսները ասում եյին, թե
յերիտասարդությունը չպետք ե միանա վոչ մի
կուսակցության, վոմանք ել կողմնակից եյին
վոչ մի իշխանություն չճանաչող անարխիստ-
ներին։

Վրա հասավ մայիսի մեկը:

Հարյուր-հազարավոր բանվորներ ու այլ աշխատավոր ժողովուրդ թափվեց Պետրոգրադի փողոցներն ու հրապարակները: Յեվ բոլոր շքասյուներում մասնակցում եր յերիտասարդությունը անթիվ շարքերով: Ամենուրեք ծածանվում եյին կարմիր դրոշակներ, ժապավեններ, Յեղբայրս ասում եր, վոր հարյուր հազարից վոչ պակաս յերիտասարդություն մասնակցում եր այդ որը մայիսյան տոնակատարությանը:

Մի քանի որից յես գնացի յեղբորս հետ մի ժողովի, ուր հավաքված եյին զանազան գործարանների բանվոր յերիտասարդության պատգամավորները: Պարզվեց, վոր հեղափոխության հենց առաջին որերից յերիտասարդությունը փորձում ե միանալ, կազմակերպվել. ցավը այն ե, վոր նրա վրա քիչ ուշադրություն են դարձնում:

Մի ինչ վոր յերկարահասակ, խարտյաշ յերիտասարդ, ձեռները շարժելով, կանչում եր՝

— «Ընտրեցինք մեր ներկայացուցչին գործարանային կոմիտեյի մեջ, բայց նրան չեն ընդունում. ընտրեցինք նրան Խորհուրդ—դարձյալ չեն ընդունում: Պետք ե կազմակերպվել»: Այդպիսի ճառեր լսվում եյին բոլոր անկյուններում, վորոշեցին կազմակերպել հատուկ ցույց-յերթ,

յրավունքներ պահանջելով յերիտասարդության համար: Հենց այստեղ ել ընտրեցին լողունգներ—վեցժամյա աշխատանքի որ բանվորական յերիտասարդության համար, նրա ներկայացուցիչների ճանաչումը: Յեղբայրս ինձ հրեց արմունկով. «Հանգիստ կաց, հարյուր հազար յերիտասարդություն, վոր փողոց դուրս գա—չեն կարող մերժել նրա արդար պահանջները»: Արդեն պատրաստվում եյինք ցըվելու, յերբ հանկարծ խոսք խնդրեց կարգին հագնված մի պարոն՝ Շեվցովլ ազգանունով: Նա առաջարկեց ստեղծել յերիտասարդական միություն «Աշխատանք և Լույս» անունով:

— «Իմ բնակարանում,—ասաց նա,—կարող ե հավաքվել ձեր կոմիտեն. այլ գործերում ևս յես ձեզ կոգնեմ»:

Բոլորը համաձայնվեցին:

Յես ևս անդամագրվելի «Աշխատանք և Լույս» միությանը, բայց մի քանի շաբաթից մենք բոլորս խեղդվում եյինք ձանձրույթից: Մի անգամ մենք գնացինք նայելու Շիստելքուրդի ամրոցը, ուր առաջ հյուծվում եյին ցարական կառավարության վրասած հեղափոխականները: Վեհ ու ահոելի յեր թվում ցարական իրավակարգի այդ հուշարձանը: Փորձեցի աշխատել «Աշխատանք և Լույս» միության հիմնած ատաղձաղործական գպրոցում, բայց այդ որերը դժվար եր խաղաղ

աշխատանքով զբաղվել։ Կյանքը յեռում եր չորս
դին։ Բոյլշկիկների ու Ռուսաստանի այն ժա-
մանակա վարիչ Կերենսկու վեճը խորանում
եր որեցոր։ Արդեն զգացվում եյին հեղափոխա-
կան նոր փոթորկի հեռավոր դղրդյունները։ Իսկ
մեր ղեկավարները, Շեղցովի գլխավորությամբ,
ամեն կերպ ձգտում եյին հեռացնել մեզ այդ
կովից, նստեցնել մեզ արհեստավորական դըպ-
րոցների նեղ վանդակը։

Մեր յեռանդը սառեց։ Յերբ հրավիրվեց մի-
տինդ՝ «Ամբողջ յերիտասարդությունը ղեղի
«Աշխատանք և Լույս» նշանաբանով, պարզվեց,
վոր վոչ վոք չի ուղում միանալ մեզ։ Իզուլ-
ճառախոսը հրավերներ եր թափում ամբիոնից։
յերիտասարդությունը պատասխանում եր քմծի-
ծաղով և ուսերը թոթվում։

Շեցցով վորձեց նույն իսկ խանդարել յերի-
տասարդության իրա լունքների պաշտպանության
ցույցը, իսկ յերբ տեսավ, վոր նրա հետ չեն
համաձայնում, առաջարկեց։

«Լա՛վ, դուրս գանք ցույցի, բայց կապույտ
դրոշակներով։ Կարմիր գույնը արդեն ձանձրա-
ցրել ե, զահլա տարել։ Կապույտը՝ ծովի, յեր-
կնքի գույնն ե. Նա ամենից ավելի համապա-
տասխան ե յերիտասարդության փոգուն։»

Սակայն ցույցի ժամանակ կարմիր դրոշակ-
ների ծովում հազիվ եյին նշանարկում կապույտ
կտորները, ասես աննշմար կղզիներ։ Դրոշակնե-
րից շատերի վրա վառվում եյին բոյլշկիկների
լոգունգները։

— «Խաղաղություն խրճիթներին, պատերազմ
պալատներին»։ «Պատերազմ պատերազմին»։

Նեվսկիյ պլրոսպեկտում, ուր միշտ զբունում
եր Այապաներով, կրծկաներով և ուլայած ոճիք-
ներով հասարակությունը, մի խոսքով՝ բուրժուա-
կան ցեղի ծնունդը, յերիտասարդության վրա
թափեցին, ասես կատաղած չների վրա։ Փոր-
ձում եյին խլել դրոշակները։ Սակայն մի կարճա-
տեվ կուվից հետո բուրժույների համար ատելի
լողունգներով դրոշակները մնացին մեր ձեռքին։

Ցույցը պ ա ր զ ե ց, վոր յերիտասարդու-
թյունը նույնպես ուզում ե մամնակցել հեղա-
փոխությանը։ Նա անտարբեր չեր ղեղի այն
կոփը, վոր ծավալվում եր ամբողջ յերկրում։ Նա
ձգտում եր կանգնել կողք-կողքի ավադ յեղբայր-
ների հետ ու վառված եր ատելությամբ ղեղի
բուրժուազիան։

Մի ամսից՝ շրջանների պատգամավորների
խորհրդակցությունը վորոշեց ցրել «Աշխատանք
և Լույս»-ը։ Նրա փոխարեն կազմակերպվեց Յերի-
տասարդության Սոցիսլիստական Միություն։

Այդ միությունը առանց վարանման հարեց
բոյլշիկներին:

Մենք իմացանք, վոր Մոսկվայում ևս կան
բոյլշիկներին կողմնակից յերիտասարդական
խմբակներ: Մենք մենակ չեյինք:

Իսկ հոկտեմբերյան փոթորիկը մոտենում եր
արագ ու արագ:

Պայթեց, վերջապես, առաջին վորոտը:

Յերբ փողոցներում սկսեցին բարձրաւալ բար-
րիկադները, յերբ սկսվեց հրացանաձգությունը
սպաների դեմ, յերիտասարդությունը առաջինը
մասնակցեց գրոհին:

Կարմիր գվարդիայի հավաքման կետերում,
ուր զենք ու փամփուշտ եյին բաժանում, քիչ
չեյին անբեխ դեմքերը: Պատահում եր, վոր հրա-
ցան ստացող յերիտասարդը հենց այստեղ ել
սովորում եր լեցնել ու գցել: Լինում եյին դեպ-
քեր, յերբ հրացանը գրեթե ավելի ծանր եր, քան
իրա տեղը...

Իզուր չեր, վոր հոկտեմբերյան ապստամբու-
թյունից առաջ լենինը գրում եր, թե ամենա-
գլխավոր կետերը գրավելու գործը պետք ե հան-
ձնել բանվոր յերիտասարդությանը:

Յերբ Կերենսկին, փախչելով Պետրոգրադից,
հավաքեց կողակներին ու փորձեց կրկին գրոն-

տալ, նրա դեմ ուղղված բանվորական շարքերի
մեջ բազմաթիվ եր յերիտասարդությունը:

Եեցովի հնարքը չհաջողվեց: Զհաջողվեց նրան
զբոսանքներով ու արհեստավորական դպրոցներով
հետ կանգնեցնել բանվոր յերիտասարդությունը
հեղափոխությունից: Յերիտասարդությունը միա-
ցավ հասակալոր բանվորներին ու նրանց հետ
միասին դուրս յեկավ կովի հանուն կոմունիզմի:

ԱՌԱՋԻՆ ԿՈՒՎՆԵՐԸ.

Վրա հասան խռովահույզ որերը:

Յես, մեծ յեղբորս հետ միասին, գրեթե չեյի
վերցնում ուսերիցս հրացանի փոկը: Սկզբում
մեր կարմիր գվարդիական գունդը ուղարկված
եր պաշտպանելու գերմանացիներից Պետրոգրադի
դերքերը: Սաստիկ ցրտերին, ճերմակ-գվարդիա-
կանների մշտական սպառնալիքի տակ, մեր թի-
կունքում, առաջ եյինք շարժվում: Հազիվ կընք-
ված եր Բրեստում հաշտությունը, յերբ պայթեց
չեխո-սլավակների ճերմակ-գվարդիական ապրու-
տամբությունը Վոլգայի վրա:

— «Բոլո՛րը — հեղափոխության պաշտպանու-
թյան համար», — հրավիրում եյին կուսակցության
կոչերը:

Գերիներից կազմակերպված չեխոսալավական գորքերը լավ զինված եյին ու մարզված։ Մեր թիւ կունքում նրանք ունեյին հազարավոր ողնական ներ բուրժույներից ու նրանց արբանյակներից։ Չեխոսալավակները, սպաների, յունկերների ու բուրժուական վորդիներից կազմված կամավորական հորդաների հետ միասին, դալիս եյին հրով ու սրով վոչչացնելու բոյլշեիկներին։ Շուտով արեվելքից խուժող ճերմակների գլուխն անցավ հայտնի ծովալետ Կոլչակը։ Սև-ծովյան նավատորմի հրամանատար յեղած ժամանակը նա հոչակվեց յուր անորինակ վայրագությամբ նավաստիների վերաբերմամբ։ Սյդքանը բավական եր, վորպեսզի հեղափոխության թշնամիները հայտարարեյին նրան «Այլենիքի վրկիչ»։ Սակայն Կոլչակը հայրենիքը չփրկեց։ մի-յերկու տարուց, կարմիր զորքերից ջարդված, նա գերի ընկալ ու գնդակահարվեց։

Ամառվա վերջին, յերբ մենք մի բլբակի շեղ փեշին սողում եյինք շղթայով դեսի այնտեղ ամբացած չեխոսալավակների ջոկատը, իմ կողքին պայթեց թշնամու ոռոմբը և ինձ վիրավորեց։

Ինձ ուղարկեցին նախ հիվանդանոց և ապա տուն՝ հանգստանալու։

Ուրախությամբ դիմավորեցին ինձ միության անդամ-ընկերներս։ Պատմեցին նորություններ։

Ուստաստանում յերիտասարդական միությունները հաշվում եյին արդեն տասնյակներով։ Խոսում եյին այն մասին, թե պետք ե նրանց կապել իրար հետ, միացնել մի ընդհանուր գրոշակի տակ։ Դրա համար անհրաժեշտ եր բոլոր յերիտասարդական միությունների պատգամավորներին հրավիրել համագումարի և այնտեղ կայացնել բոլորի համար պարտադիր վորոշումներ։

Ա.Ռ.Զ.ՀՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ.

Պատահմամբ այդ որերը յես Մոսկվայումն եյի։

Մայրս տեղափոխվել եր այնտեղ, յուր յեղբոր մոտ ու յես գնացի նրան տեսության։ Գնում եյի վողոցով, աշխատելով չմոլորվել անթիվ ծուռափկ նրբափողների մեջ, չկորսվել քաղաքային աղմուկի մեջ, վորը յես գրեթե մոռացել եյի մի քանի ամսվա ընթացքում՝ թափառելով գյուղերում։ Գնում եյի մտազբաղ։ Մայրս ապրում եր կիսաքաղց վիճակի մեջ և յես գլուխ եյի տրաքացնում, թե ի՞նչպես նրան ոգնեմ։ Հանկարծ անսպասելի բացականչություն—

— «Մերգո՛, դո՞ւ յես»։

Եետ դարձա—մեր Պիտերի տղաներից մի քանիսը, միության ղեկավարներից։ Ինձ, իբրև

ճակատայինի, — վորպիսի՝ հպարտությամբ իմ
տասնուհինդ տարիների համար կրում եյի այդ
կոչումը, — նրանք բոլորը վերաբերվում ենին
ուշադիր ու ընկերաբար: Հանդիպումը ինձ ուրա-
խացրեց, միշտ հաճելի յե պատահել բարեկամ-
ների ոտար քաղաքում, այն ել այդպիսի լավ
տղաների: Սկսում եմ հարց ու փորձը.

— «Ի՞նչպես, ի՞նչ գործով իմբովին ե՞ք
յեկած»:

Նրանք ծիծաղում են: Հետո նրանցից մեկը
ցույց ե տալիս մի շատ բարձր տուն, մեզանից
քսան քայլ հեռու.

— «Ահա ուր ենք գնում. յերիտասարդական
միությունների համագումարին»:

Շունչս, ասես, կտրվեց: Այն համագումարը,
վորի մասին յես դեռ նոր մտածել եյի, արդեն
սկսվում եր. այն համագումարը, ուր կարելի
յեր տեսնել մեր ընկերներին—յերկրի բոլոր ծայ-
րերից: Յես կպա տղաներին.

— «Յես ել ձեզ հետ, տղերք: Շատ եմ ու-
զում լսել, թե ինչ ու ինչպես պիտի խոսեն հա-
մագումարում:

Տղերքը չառարկեցին: Արդեն միջանցքում
մեզ խլացրեց անվերջ խոսակցությունների, բա-
ցականչությունների, վեճերի աղմուկը: Միքանի
բողեյից մտանք դահլիճ:

Յուրաքանչյուր վողջույն, վոր վերջանուս
եր կեցցեներով՝ յերիտասարդության հասցեյին,
բարձրացնում եր ծափերի փոթորիկ: Սակայն
վոչ մի բանի հետ չեր կարելի համեմատել այն
հրճվանքը, վորով համագումարը արձագանգեց
վ. Ի. Լենինին համագումարի պատվավոր նա-
խագահ ընտրելու առաջարկին: Հենց այստեղ ել
վորոշեցին պատգամավորություն ուղարկել իշ-
յիշի մոտ ու մի կարգին պարզել այն խնդիր-
ները, վոր ծառացած են յերիտասարդության
առաջ:

Հետո պատգամավորները պատմեցին իլյիչի
հետ ունեցած իրենց զրույցի մասին: Իլյիչն
ընդունել եր նրանց իր սովորական սիրալիրու-
թյամբ: Պատգամավորները շատ հուզված են
յեղել մեծ ուսուցչի և առաջնորդի հետ ունե-
նալիք զրույցով և սկզբում չեն կարողացել մի
խոսք անդամ արտասանել: Սակայն իլյիչը շատ
շուտով փարատել ե նրանց հուզմունքը:

Յերբ պատգամավորները հայտնել են, թե
համագումարը վորոշեց անվանել յերիտասարդա-
կան միությունը կոմունիստական, իլյիչը կըտ-
րել ե նրանց խոսքը.

— «Բանը անունի մեջ չե»:

Իլյիչի հետ խոսող պատգամավորը առար-
կել ե.



— «Բայց մենք կարդարացնենք այդ անունը»:

Ու իլյիչն խսկույն փայլել ե իր ուրախ, անմռանալի ժպիտով։ Նա պատգամավորներին հեղեղել ե հարցերի տարափով։ Հարցրել ե, թե վորքան բանվորներ կան ներկա յերիտասարդական միությունների մեջ, վորքա՞ն անդամ ունեն նրանք ընդհանրապես, հետաքրքրվել ե աղջիկ-պատգամավորների թվով։

Յերբ հրաժեշտի պահուն պատգամավորները սեղմել են իլյիչի ձեռքը, նրանք զգացել են իրենց միանգամայն վերածնված։ Իլյիչի հետ ունեցած զրույցը ծառացրել ե նրանց առաջ մի շարք հարցեր, վոր մինչ այդ, նրանց ուշադրությունից վրիպել եյին։

Յերիտասարդական միությունների համագումարը վորոշեց միացնել բոլոր ցրված կազմակերպությունները և անվանել նրան Ռուսաստանի Յերիտասարդության կոմունիստական Միություն։ Այդպիսով ուրեմն, Միությունն ընդունեց նույն անունը, ինչ վոր կրում եր Ռուսաստանի կոմունիստական կուսակցությունը (բոյլշվիլների)։ Նույն համագումարը վորոշեց, վոր նոր միությունը պետք ե ամբողջովին ուլիովին աջակցի կուսակցությանը։

Դա շատ նշանակալից վորոշում եր։ Յերիտասարդությունը ասաց յուր խոսքը շեշտակի ու

արիաբար։ Նա չքողալկվեց վորեւ «անկուսակցական» շղարով, այլ հայտարարեց, վոր նա կողմնակից ե կոմունիզմի, կոմունիստաների կովկնամինչ հաղթական վախճան։ Մատնանշում եյին, թե «Կոմունիստական Միություն» անունը կարող ե վախեցնել վոչ զիտակից յերիտասարդությունը, սակայն դա տեղիք չտվեց տատանումների։

— «Ե՞ս, ի՞նչ կա վոր, — ասում եյին պատգամավորները, — կարող ե պատահել, վոր ամենահետամնայ անհատ պատանիները չեն միանա մեզ։ Կարող ե պատահել, վոր առանձին յերիտասարդներ, յերկյուղ կրելով իրենց կաշվի համար, չեն մտնի մեր շարքերը, բայց յերիտասարդության գլխավոր զանգվածը, նրա հիմնական մասը, այս անունով ավելի ևս կդրավվի, վորովհետև նա առանց այն ել կոմունիզմի ու կոմունիստաների կողմն ե։»

Համագումարից հետո անմիջապես պարզվեց, թե վորքան կարձատես են յեղել կոմունիտական անունն ընդունելուց վախեցողները։ Կաղմակերպությունները աճում եյին վոչ թե որեցոր, այլ ժամեւժամ։ Հաճախ յերիտասարդությունը, հազիվ կոմյերիտմիության շարքերը մտած, իսկույն զենքը առած ուղերվում եր ճակատ։ Կովի փորձությունները անզոր եյին խախտելու նրա հեղափոխական հավատը։

Մինչ այդ, դրությունը ճակատում վատանում եր: Կարմիր բանակը այն ժամանակ դեռ նոր եր դառնում այն հուժկու, անհաղթ ուժը, վոր այսոր ահ ու յերկյուղ ե ներշնչում նույն իսկ արտասահմանյան բուրժուազիային: Ճերմակ-գվարդիականները զորեղ ոգնություն եյին ստանում արտասահմանից: Ֆրանսիական, անգլիական, ամերիկական և այլ զորքեր ափ եյին իջնում ոռուսական նավահանգիստներում, վորպես զի ոգնեն ճերմակ-գվարդիականներին հեղափոխությունը խեղելու: Սպաները, դասալիքները և Խորհրդային իշխանության այլ թշնամիները, կազմելով ավազակային հրոսակախմբեր, կողոպտում եյին անպաշտպան քաղաքները, խորտակում գնացքներն ու վնասում մեզ ամեն մի քայլափոխում:

Ճերմակ-գվարդիականները գրավել եյին այն շրջանները, ուր վառելիք ու հում նյութեր եյին պատրաստվում, և մեր գործարանները ստիպված եյին մնալ առանց աշխատանքի: Հացառատ Ուկրայինան, Դոնը, Կուբանը, Սիբիրը, — յերկրի այդ շտեմարանները, — Ռուսաստանի կենտրոնից կտրված եյին, վոր մատնում եր մեզ սովալլկության:

Ահա այսպիսի պայմաններում հալաքվում եր Կոմյերիտմիության յերկրորդ համագումարը,

վորին ներկա եյի և յես, իբրև պատգամավոր մեր կազմակերպությունից:

ԲՈԼՈՐԸ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ.

Լուրջ ու ինքնամփոփ եր այդ համագումարը Ահա յերեաց ամբիոնի վրա ընկեր Տրոցկու առյուծի գլուխը: Պարզորոշ, ասես մուրճի հարվածը մետաղին, ուղեղի ու սրտի մեջ մեխվող ձայն —

— «Դուք պետք ե ձեր բոլոր ուժերը տաք Տուլայի ու Մոսկվայի դիրքերի պաշտպանությանը, — ասում եր նա, — իհարկե, դա անողոք կոփ ե ու կոփի մեջ ընկնում են զոհեր: Իհարկե, ձեզ, ինչպես և ամեն մեկի համար թանկ ե կյանքը, վորովհետեւ կյանքը տրված ե առաջ ընթանալու համար, գիտություն ձեռք բերելու, իսկ գիտությունը բաց ե անում մեր առաջ նոր ու լավագույն աշխարհներ: Մեզանից ամեն մեկը, յեթէ նա լուրջ մարդ ե, պարտական ե թանկ գնահատել կյանքը:

Սակայն, գնահատել կյանքը չի նշանակում գողալ կյանքի համար: Վախկոտ մարդը, նա՝ վորին մենք բանակում կոչում ենք կաշվամոլ, չի գնահատում կյանքը, այլ գողգողում ե կյանքի համար: Նա տասն անգամ ու հարյուր անգամ մեռնում

Ե վախից, մինչև վոր ճակատագիրը նրան իսկական մահվան ե հասցնում։ Քաջու արի մարդը մեռնում ե միայն մի անդամ։ Նա իր կյանքը չետալիս անմիտ, անիմաստ, ինչպես թղթամոլը, վորովճետե գնահատում ե կյանքը։ Բայց այնուեղ, ուր այդ պահանջում ե բանվոր դասակարգիշահը, կոմունիզմի շահը, ազնիվ, համարձակ մարդը իրավունք չունի տատանվելու և վո՛չ մի ժամ, վո՛չ մի ըոպե։ Յես չեմ կասկածում, ընկերներ, վոր այն որն ու այն ժամին, յերբ մեր յերկրի բանվորը պահանջե ձեղանից ամեն մեկից, վորքան ել ջահել նա լինի, յուր մարմնով ծածկել բացը, փակել թշնամու ճանապարհը, ձեղանից ամեն մեկը կասի—«Յես այստեղ եմ, իմ դիրքում։ Բանվոր դասակարգի յերջանկության համար յես պատրաստ եմ տալու իմ արյունը՝ մինչև վերջին կաթիլը»։

Քվեարկության ե դրվում՝ տամնըվեց տարեկանից սկսած բոլոր կոմյերի տականներին կարմիր բանակի դրոշակների տակ զորակոչելու բանաձել։ Զեռքերի ամբողջ անտառ բարձրացավ «թեր»։ Դեմ—վո՛չ մի ձայն։

Համագումարից հետո անմիջապես անցանք նրա հրահանգի իրականացմանը։ Վառ ե հիշողությանս մեջ մեր ջոկատը, վորի շարքերումն

Եյլ և յես։ Ահա գնում ենք դեպի կայարան։ Հնչում, ծավալվում ե խիզախ յերգը—
... Համարձակ կկովենք
Խորհուրդների անվան,
Թեկուզ և զոհ ընկնենք
Կովում նվիրական։

Կայարանում ճամբողների ամբողջ ամբոխը ճակատ ե յին գնում և կոմյերի տունիները (համագումարը վորոշեց զինակոչել միության անդամներին, առանց սեռի խտրության)։ Նրանցից վոմանք զինված ե յին, ինչպես և մենք, վոմանք ել հագել ե յին կարմիր Խաչի փաթաթները։ Ճամբողների մեջ ե յին մեր ազգականները, վոր վողբում ե յին հաստատ մահվան գնացողների ճակատագիրը։ Սյատեղ ե յին խռնված և մնացող ընկերները։ Նրանք մեզանից վոչ պակաս ձգտում ե յին դեպի ճակատ։ Սեղմելով մեր ձեռքերը, նրանք խոսք ե յին տալիս ամեն կերպ ոգնելու մեջ թիկունքում։ Տղաներից վոմանց զոռով յետ ե յին կանգնեցնում ինքնակամ մեղ հետ ճակատ մեկնելու փորձերից։

ՀԵՐՈՍՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐ.

Միությունը թևակոխեց իր աշխատանքի ամենահերոսական շրջանը։

Մի որ յես մի քանի հին կոմյերիտականների
հետ նստած եյի կոմյերիտական ակումբում:
Վորոշեցինք անցկացնել յերեկոն քաղաքացիա-
կան կովի շրջանից արկածներ պատմելով։ Պատ-
մելու առաջին հերթն ընկավ փոքրիկ, ուրախ
ուկրայնացուն, վոր շատ եր սիրում հանաքներ
անել։ Այս անգամ ել մենք սպասում եյինք
վորեե զվարճալի կատակի։ Բայց նա մեղ պատ-
մեց Տրիպոլի մասին։

— «Կիյեվի տակ այդ պահուն աշխատում եր
Զելյոնը Բատկոն։ «Բատկո»— հրոսակախմբի
պուխն ե։ Նրա խումբը բաղկացած եր ընտիր
գլխահատներից։

Պետք եր գրանց վերջ տալ։ Այդ նպատակով
կանչվեցին հարյուրի չափ կոմյերիտականներ,
վորոնց թվում և աղջիկներ։ Հազիվ մենք, մտած
կարմիր-բանակային գնդի մեջ, ճանապարհ եյինք
ընկել, յերբ սոսկալի գուժով դիմավորեց մեզ
ընդառաջ յեկող պահակախումբը։ Հենց նոր
Որուխով ավանում բանդիտները մորթել են կար-
միր բանակայինների մի ամբողջ ջոկատ։ Անհրա-
ժեշտ եր զգաստ լինել։

Ահա և Տրիպոլին—Զելյոնըի ապաստանը,
վորջը։ Սկսվեց հրացանաձգությունը։ Դնեպրի
կողմից վորոտացին մեր զրահանավի թնդանոթ-
ները։ Բանդիտները լոեցին։ Յերբ գյուղ մտանք,

մեղ դիմավորեց ահավետ, սրտամաշ լոռությունը։
Գյուղը, ամես, մեռած լիներ։ Մերոնց մի մասը
տեղավորվեց գյուղում, իսկ մյուսը դարան
մտավ շրջակա լեռներում։

Ու հենց այստեղ, եր, վոր սկսվեց...

Պարզվեց, վոր ավագակները պահված են
յեղել կտրատակերում ու մառաններում, սպա-
սելով այն բողեյին, յերբ, ոգտվելով մեր ան-
հոգությունից, կհարձակվեն մեզ վրա։ Ու այդ
րոպեն հասավ։ Բոնվածների գանգն եյին ջար-
դում մահակներով, կտրատում նրանց կացին-
ներով։ Զուր եր մի մասը փորձում ազատվել
նավակներով, Դնեպրի վրայով։ Նավակի մեջ
այնքան մարդ եր թափվում, վոր նավակը շուռ
եր գալիս։ Ստիպված եյինք նորից ափ գուրս
գալ։ Հրացանի կոթերով թակելով՝ քշեցին մեզ
գյուղ։ Մի ինչ վոր մառանի մեջ փակեցին, ուր
մենք անցկացրինք մղձավանջային գիշեր։ Մեռ-
նողների հառաջը, կենդանի մնացածների անեծքը
կազմում եյին մի ինչ վոր գժոխային աղմուկ։

Առավոտյան մեզ գուրս բերին հրապարակը-
հրաման տրվեց.

— «Զնուդներ ու կոմունիստներ, առաջ ան-
ցեք»։

Նրանք, վորդուրսյեկան շարքերից, մատնավեցին
սարսափելի մահվան—տեղնու տեղը կոտորվեցին։

Մհացածներին տարան մի այլ շենք. նրանց ևս մահապատիժ եր սպասում: Ամբողջ զիշերը մեկ-մեկ տանում եյին գնդակահարելոււ Յես աղատվեցի հենց գնդակահարության ժամանակ, վիրավոր գցելով ինձ Դնեպրը...: Հարյուրի չափ կոմյերիտականներ կոտորվեցին Տրիպոլյում...»:

Յերկար ժամանակ լուռ եյինք: Հետո սկսեց պատմել յերկրորդ ընկերը—թուխ հույնը Ողեսայից.

— «Զեմ ուղում յերկար խոսել,—սկսեց նա, — յես ձեզ կկարդամ մի ընկերոջս նամակը, վորի հետ միասին աշխատել եմ և վորը մահվան պատժի յենթարկվեց Ողեսայում 1920 թվի հունվարին, ճերմակների ձեռքով: Այն ժամանակ կոմյերիտականները աշխատում եյին ընդհատակյա, ծածկելով իրենց ամեն մի քայլը սպայական վոհմակից: Բայց լրտեսները մեզանից շատերի հետքերը գտել եյին: Ահա այն նամակը, վորը մեռնելուց առաջ գրել ե իմ սիրելի ընկերը.

— «Թանկագին ընկերներ, ինձ ճերբակալեցին յերեքարթի, այսինքն, մի շաբաթ սրանից առաջ: Ինձ մոտ վոչինչ չգտան: Զերբակալության ժամանակ ծեծում եյին, չեյին հավատում վոր յես լեհացի յեմ, Ամբողջ յերեքարթի անցկացրի քրեյական-հետախուզական, իսկ զիշերը

Պետրոպավլովսկից բաժնում: Չորեքշաբթի մինչև կեսորը հանդիսատ եյի, կարծելով, վոր ինձ շուտով բաց կթողնեն: Կես ժամը ինձ կանչեցին հարցաքննության: Այնտեղ ինձ թակեցին մոտ մի ժամ: ծեծում եյին ուետինով, վոտներով, շրջում եյին ձեռներս ու վոտներս, մեկ վոտքս քաշեցին մինչև յերեսս, իսկ մյուսը՝ ծոծրակս. բարձրացնում եյին մազերիցս, պառկեցնում գետին ու պարում մարմնիս վրա, խփում եյին յերեսիս, ատամներիս, բայց այնպիսի հաշվով, վոր հետքեր չմնան: Վերջապես իմ լուռթյունից գաղանացած, Խվանկովսկին, առաջին սինլքորը աշխարհիս յերեսին, ատրճանակով խըփեց գլխիս: Արյունաթաթախ ընկա գետին: Մի քանի անգամ ուշաթափվեցի: Մի տեսակ անտարբեր վիճակի ազդեցության տակ խոստովանեցի, վոր աշխատում եյի: Ինձ սպառնում եմ մահապատիժ՝ յեթե մինչ այդ չպատահի վորեե բացառիկ դեպք: Գիշերը մի քանի անգամ փորձեցի դուրս ընկնել չորրորդ հարկի պատուհանից, բայց ինձ հետ եյին քաշում ու նորից ծեծում: Լուսադեմին ինձ նորից հարցաքննության կանչեցին ու պահանջեցին, վոր հայտնեմ ինձ հետ աշխատող ընկերների անուններն ու հասցեները: Յերկար աշխատեցին, բայց վոչինչ չշահեցին. բոլոր հարցերին պատասխանում եյի

Դուռթյամբ և կամ «չգիտեմ»-ով։ Պահանջեցին,
վոր ստորագրեմ ցուցմունքներիս արձանագրու-
թյունը։ Ստորագրեցի, վորից հետո իվանկովսկին
ձեռքը թափ տալով, հրամայեց տանել ինձ վոս-
տիկանական բաժիններից մեկը։ Փաստորեն յես
արդեն հրաժեշտ եմ տվել իմ կյանքին ու յեթե
պատահմունքի բերմամբ վողջ մնամ, դա կինդի
ինձ համար հաճելի և անսպասելի նվեր։ Այժմ,
յերբ գլխիս վերքը արդեն փակվել ե, յերբ ամ-
բողջ մարմնիս ցավը արդեն այնչափ զգալի չե,
և կենսական ուժերը կրկին ընդգրկում են որ-
դանիզմս, իսկ մոտակա հեռանկարները դրսում
(կարմիրները արդեն հաղթանակներ եյին տա-
նում) այնքան գրավիչ են, ուզում եմ ապրել,
ինչ ել վոր լինի։ Առանց կովի յես չեմ հանձնվի,
առանց կովի չեմ մեռնի և յեթե այնուամենայ-
նիվ պետք ել լինի այժմ մեռնել—կղիմավորեմ
մահը՝ գլուխս բարձր բռնածք։

Մնաք բարեւ

Զեր Զիգօւ

Վերջինը մենք լսեցինք մի սոսկալի պատ-
մվածք 1920 թ. ապրիլին Սիմֆերոպոլում կախ-
ված կոմյերիտականների մասին։

— «Ութն եյին նրանք։ Իններորդին, Շպալ-
յանսկայային, մինչև մահապատիժը չարչարեցին

հականետախուզական բաժնում, կտրեցին ծծերը
և կտրատեցին ձեռքերը։ Նա իհարկե չապրեց
մինչև մահապատիժի ժամը։

Ժամը չորսին, յերբ գեռ նոր եր լուսանում,
նրանց հանեցին բանտի հրապարակը։ Դահիճների
սպառնալիքը անզոր եր կասեցնելու «ինտերնա-
ցիոնալի» հայունները։ Մեկը մյուսի յետեից
կախ տվեցին ելեքտրոլապտերների սյուներից։
Արդեն մեռնողներին, թոկը վզին ցած եյին
իջեցնում, շնչելու հնարավորություն տալիս ու
ապա նորից բարձրացնում, վորպեսզի ավելի
չարչարվեն։ Ամբողջ որը ծածանվում եյին դի-
ակները սյուների վրա, իսկ սյուներին վրան-
գելան դահիճները կացըրել եյին պլակատներ—
— «Կորավ հանուն կոմունայի»։

Ահա նրանք, այդ փառավոր տարիները...

Ճակատում ամեն ըոպե պատրաստ մեռնելու
քաջությամբ ու անվեհերությամբ ուրիշներին
որինակ ծառայելով, խուլ ընդհատակում հար-
վածներ նյութելով բուրժուական-գեներալական
իշխանության զլսին, կոմյերիտականները ան-
նկուն եյին իրենց զիրքերում։ Հոկտեմբերյան
ազատության համար մղած կոփսերի պատ-
մության մեջ կոմյերիտականները իրենց արյու-
նով գրել են անմոռանալի եջեր։

Դժվար ե պատմել այն ամենը, ինչ վոր յես
ինքս եմ ապրել ու զգացել: Հետապնդում եյի
բանդիտներին, փախչող ճերմակների կռնակի
վրայով մտնում եյի նրանց թողած քաղաքները,
գերի ընկա և արդեն հրաժեշտ եյի տալիս կյան-
քին, բայց պատահմունքով ազատվեցի: Դե, ինչ
ասեմ, մի քանի մասերից բաղկացած ամենահա-
րուստ կինոնկարը չի կարող համեմատվել այն
արկածների հետ, վոր յես եմ ապրել այդ տա-
րիներին:

Բայց կոմյերիտմիության յերրորդ համագու-
մարի նախորյակին յես, բծավոր տիֆից դեռ նոր
կազդուրված, մի ինչ վոր խարխուլ շոգեկառքի
վրա քարշ եյի դալիս դեպի Մոսկա: Գրողնում
պահված եր մանդատս, վորը հաստատում եր,
թե յես, հիրավի, ընտրված եմ այդ համագումա-
րին ուկրայնական նահանգներից մեկում, ուր
այն ժամանակ գտնվում եր մեր զորագունդը:

Վորավիսի՛ յերջանկություն եր, վոր ինձ հա-
ջողվեց լինել այդ համագումարում:

Այդ համագումարում դուրս յեկավ ինքը՝
կենիսը:

Յուր խորատես աչքերը կկոցած, ճաղատ
գուխը շողացնելով, նա գրոհ տվեց համագու-

մարի վրա, ասես վորձառու հրամանատար, մեկը
մյուսի յետեկից առաջ մղելով յուր անհողդողդ
մաքերի ներդաշնակ շարքերը:

Նրա ճառի մեջ ամեն ինչ հասկանալի յեր,
նույն իսկ չափազանց հասկանալի: Վոմանք
նույն իսկ զարմանում եյին, թե ինչու լենինը
չի ասում վոչինչ անսովոր, զարմանալի: Բայց
ահա շատ տարիներ են անցել այն որից, և յերբ
մենք ուղում ենք քննել ու գնահատել կոմյե-
րիտմիության աշխատանքը հեղափոխության շա-
հերի աեսակետից, մենք դիմում ենք այդ զար-
մանալի ճառին:

Ինչի՞ մասին եր խոսում իլիչը:

Նա սկսեց նրանից, վոր յերիտասարդությանն
ե բաժին ընկնում նոր, կոմունիստական կյանքը
լիովին վերկառուցելու խնդիրը, կոմունիզմի
կառուցումը, այսինքն այնպիսի կյանքի, յերբ
բոլորը հավասար են, բոլորը ապրում են բարե-
կեցության մեջ, առանց պատերազմների ու
յերկպառակությունների՝ դա անընդգրկելի խըն-
դիր ե: Մի թափով նրան չես լուծի: Այստեղ
անհրաժեշտ են լուրջ ու համառ աշխատանքի
տարիներ: Պարզ ե, վոր հեղափոխականների
ավագ սերունդը չպիտի կարողանա այդ աշխա-
տանքը ի կատար ածել: Այդ աշխատանքը պետք
է ստանձնի յերիտասարդությունը:

Սակայն, ամեն մի գործ պահանջում ե զիտություն։ Յեթե նոր տան պատերը կառուցանող քարտաշը չգիտի այդ պատերի բարձրության վրա կանգնելու արվեստը, նա կընկնի ու կշարդվի։ Յեթե նա սխալ շարե քարերը, պատերը կքանդվէն շատ առաջ, նախ քան նրանց տանիքով ծածկելու ժամանակը։ Կոմունիզմ կառուցանելու համար պահանջվում ե, անշուշտ, անհամեմատ ավելի դիտություն, քան թե մեկ, թեկուզ և շատ մեծ տուն շինելու։ Ուրեմն պետք ե սովորել ու սովորել. Բայց սովորելն ել պետք գիտնալ թե ինչպես։

Նախկին պարոնները այնպես եյին կազմակերպում դպրոցները, հրատարակում եյին այնպիսի դասագրքեր, վոր յերիտասարդությունը սովորելով այդ դպրոցներում ու այդ դասագրքերով՝ մատակարարի նրանց հլուհատակ ծառաներ։ Այն, ինչ վոր գիտեր բուրժուազիան, պետք ե յուրացնե և աշխատավոր յերիտասարդությունը։ Բայց յեթե նա յուրացնե այդ անխտիր, սովորի թութակի նման—դրանից ոգուաքիչ կլինի։ Պետք չե վոչ մի բան ընդունել սոսկ հավատով, այլ ամեն ինչ վերստուգել ու ամեն կողմից քննել, զննել, շոշափել։ Սովորել պետք ե, իհարկե, վոչ միայն գրքերից։ Կյանքը ինքը մի մեծ դպրոց ե։ Ոգնելով մեծերին ամեն մի

գործի մեջ, մասնակցելով յուրաքանչյուր ոգտավետ նախաձեռնությանը, յերիտասարդությունը ձեռք կբերե իսկական կրթություն։

Պետք ե միենույն ժամանակ աշխատել ամեն կերպ, վորպեսզի կոմյերիտմիության ու կոմունիստների յետեկից գնա ամբողջ մնացած մասսան։ Մեկը բոլորի համար ու բոլորը մեկի համար—ահա ինչն ե ապահովում հաղթանակը։ Տանելով իր յետեկից յերիտասարդությունը, կոմյերիտմիությունը պետք ե դաստիարակե նրան կոմունիստական վոգով։ Պետք ե ընտելացնել յերիտասարդությունը այն գիտակցությանը, վոր հին կարգերի վերադարձից մեզ ապահովելու համար անհրաժեշտ ե մեր յերկրի աշխատավոր մասսաները կազմող տասնյակ-միլիոնավոր մարդկանց միասնական կամքը։

Պետք ե, վոր կոմյերիտմիությունը մանր գործերում, ինչպես և խոշոր գործերի մեջ որինակ ցույց տա։ Հանուն մաքրության, հանուն գրագիտության մղող պայպքարում՝ ամենուրեք առաջինը պետք ե լինեն կոմյերիտականները։ Իրենց արարմունքներում նրանք պիտի առաջնորդվեն կոմունիստական բարոյականությամբ, վորի համաձայն՝ լավ ե այն բոլորը, ինչ վոր նալաստում ե բանվոր դասակարգի շահերին, վատ ե ու վասակար այն, ինչ վոր խոչընդուն ե հանդիսա-

նում մեր առաջխաղացմանը դեպի կոմունիզմը:
Իյիչի ամեն մի միտքը թափանցում եր մեծ
սրտերի մեջ:

Մենք բոլորս ուզում եյինք դառնալ ապա-
պայում լավ կոմունիստներ, կոմունիզմի որինա-
կելի մարտիկներ: Ո՞վ կարող եր ավելի լավ
խորհուրդ տալ, քան կոմունիստների կուսակցու-
թյունը ստեղծած, նրան հիմքից կառուցած իշ-
յիչը, թե ինչպես կարելի յե դառնալ լավ կո-
մունիստ:

ԴԵՊԻ ԽՍԴԱԴ ՃԱԿԱԾԸ.

Յերրորդ համագումարից յես արդեն բանակ
չդարձաւ:

Պատերազմը վերջացել եր ու ինձ բաց թո-
ղին խաղաղ աշխատանքի: Քանդված, աղքատա-
ցած, ավերակներով ծածկված ծառացավ մեր
աչքերի առաջ յերկիրը քաղաքացիական ծանր
կռվից հետո: Մտածելն անզամ ավելորդ եր, թե
այդ վիճակի մեջ յերկիրը կարող ե կիրառել
կոմունիզմը: Պետք եր նախ և առաջ ազատվել
աղքատությունից, բուժել վերքերը, ուժ հա-
վաքել:

Յես ընկա խուլ ծայրագավառը: Կոմյերիտ-
միությունը դեռ նոր եր արմատներ գցում տե-

ղական յերիտասարդության զանգվածների մեջ:
Հենց սկզբից պետք եր աշխատանքի լծվել: Իմ
գալուն շատ ուրախացան ու իսկույն վորոշեցին
ինձ ոգտագործել ամեն կերպ: Ինձ առաջարկե-
ցին կազմակերպել բջիջ գյուղատնտեսական մե-
քենաների գործարանում, ուր կային մի քանի
հարյուր սկատանիներ ու յերիտասարդներ և ուր
անհրաժեշտ եր աշխատանքը կարգի գցել:

Յես ուրախությամբ համաձայնվեցի:

Գործարանում ինձ սկզբում ընդունեցին ան-
տարրեր: Յես լսեցի, ինչպես մի մրուտված յերի-
տասարդ ասում եր մյուսին, վորը քրտնաթոր
քարշ եր տալիս մի հսկայական յերկաթե ձոր:

— «Նոր ճառախոս ե յեկել: Ժողով պիտի
հրավիրե, ելի զրույցները կալսվեն»:

Սակայն, ժողովին գործարանային ճաշարանը
լեփ-լեցուն եր: Լեցը եյին նստարանները, պինդ
սեղմված իրարու, բարձրացել եյին պատուհան-
ների վրա: Առաջարկեցի նախագահ ընտրել. սկզ-
բում լուռ եյին, բայց քիչ հետո սկսեցին, իրար
ընդհատելով: —

— «Պետրոսին, Մարտինին, Սերգոյին, Գրի-
գորին»: Այնպիսի աղմուկ-ղալմաղալ բարձրա-
ցը վորին, վոր հազիվ հաջողվեց հանգստացնել: Ըն-

տրվեց Սերգոն, մի աչքը կույր, բայց շատախոս, հանաքչի ու զարմանալի հնարազետ մեկը։ Տղերքը սիրում եյին նրան այն հանաքների համար, վորոնցով նա համեմում եր գործարանում տեղի ունեցած ամեն մի դեպք։ Պատմում են, վոր հետագայում, բանֆակում սովորելիս, նա սկսել ե բանաստեղծություններ գրել, վորոնց թվում յեղել են բավական հաջողները։ Այն ժամանակները նա ոժտված եր մի ընդունակությամբ՝ յուրաքանչյուր վրիպումի համար մարդու շինքին կպցնել վորեև մականուն, վոր այսուհետև ել վոչ մի խողանակով չեյիր սրբի։

ՄԵԶ ԻՆՉՈՒ ՅԵ ՊԵՏՔ ԿՈՄՅԵՐԻ ՏՄԻՌԻԹՅՈՒՆԸ։

Առաջին խոսքը ստացա, իհարկե, յես։ Սկսեցի գեկուցումը բավական հեռուներից։

Հարցնում եմ տղերանց։—

— «Ձեր ակումբում դասախոսություններ ինո՞ւմ են»։

— «Վո՞չ։—պատասխանում են խմբովին, — բայցի անցյալ տարվա դասախոսությունից խուերայի մասին, ել չի յեղել»։

ՄԵ այլ հարց եմ տալիս։—

— «Իսկ տասնըվեց-տարեկանները ձեզ մոտ քանի ժամ են աշխատում»։

Դարձյալ սկսեցին իրար յերեսի մտիկ տալ ու ինչ վոր փսփսալ, բայց նախագահը ընդհատեց նըանց։—

— «Զանազան ե լինում։ Կան, վոր ութը ժամ են աշխատում, բայց կան և արտակարգ աշխատողներ»։

Տեսնում եմ, վոր գործս լավ ե գնում. առանց կազմակերպության՝ տղերանց գործերը հաջող չեն ընթանում։ Դարձյալ հարցնում եմ, բայց արդեն ավելի աշխայց։—

— «Իսկ ո՞վ ե ձեր շահերի պաշտպանը գործարանային կոմիտեյում»։

Այստեղ ինձ ծիծաղի վերցրին։

— «Ասում ես — գործկոմում։ Մեզ գործկոմում համբակներ են կոչում — ահա թե ինչ»։

Հետախուղումը կատարեցի, թշնամու զորամասերի գայավորումը պարզեցի, այժմ կարելի ե գրոհ տալ։

— «Ուզո՞ւմ եք, — ասում եմ, — վոր ձեզ դասախոսություններ կարդան, վոր խմբակները աշխատեն։ Ուզո՞ւմ եք, վոր ձեզ աշխատանքի ժամերը լինեն մեր. որենքներին համաձայն։ Ուզո՞ւմ եք, վոր ձեզ գործարանին կից լինի աշխերական գալրոց։ Ուզո՞ւմ եք այդ բոլորը»։

— «Ուզում ենք, ուզում ենք» — պոռացին։

Յերևում եր, վոր ամենահիվանդ տեղերին
եյի կողել:

— «Դե վոր այդպես ե,—ասում եմ,—մոռւմ
ե ձեզ կազմակերպել կոմյերիտական բջիջ, ինարկե
ձեր առաջին պաշտպանը պլրոֆմիությունն ե:
Բայց ո՞վ պետք ե լինի մղիչը, խթանը, Դուք
տեսե՞լ եք մղիչ. յերբ շոգեկառքը չի կարողա-
նելում գնացքը լեռն ի վեր բարձրացնել, գնացքի
պոչին կցում են ելի մի շոգեկառք, վորպեսդի
գնացքը յետևից հրի. այդպիսով գնացքը մագլ-
ցում ե լեռն ի վեր: Նույնը և ուսման մեջ: Ահա
աճում-մեծանում եք դուք, կմեծանաք—ի՞նչ
պիտի իմանաք: Դպրոց ե հարկավոր: Ուրեմն
դարձյալ մղիչ ե անհրաժեշտ: Ցեվ կամ պետք
կլինի պաշտպանել Խորհրդային իշխանությունը:
Ո՞վ պիտի ոգնե ձեզ պարզելու, թե ինչպիս նրան
ոգնել, ինչպես պաշտպանել: Քանի վոր դուք բան-
վոր ես, դու պետք ե իմանաս, թե ով ե քո
թշնամին ու ով ե բարեկամդ: Քանի վոր դու կու-
զես ավելի լավ կյանք—դու պետք ե իմանաս
նրան ստեղծելը: Վորտե՞ղ կարող եք դուք սովորել
այդ բոլորը: Միայն կոմյերիտմիության մեջ»:

Տեսնում եմ, տղերը լսում են ուշադրու-
թյամբ:

Հանկարծ բարձրանում ե մեկը ու ասում,
ձեռները պարզելով—

— «Ինձ ել, ինձ ել զրիբ: Համաձայն եմ կոմ-
յերիտական դառնալ, վորովհետեւ, հիրավի, այլ
յելք չկա: Հեքիաթի մեջ անդամ ասված ե՝ մի
հատ ձողիկը ամեն մարդ կկոտրի, իսկ վոր միա-
սին կապես—ձեռները կմաշե կոտրել ցանկա-
ցողը»:

Նրան հետեւցին և ուրիշները: Թերթը, վոր
հետո եյի վերցրել ցանկացողներին արձանագը-
րելու համար, ամբողջովին լեցված եր, մի մասը
արձանագրվեց առանձին թերթիկի վրա:

ԿՈՄՅԵՐԻԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄԸ.

Կոմյերիտմիության ամենազլիսվոր ու հիմ-
նական խնդիրն ե—փոխարինողներ պատրաստել
նրանց, ովքեր ներկայումս կատուցում են. փոխա-
րինողներ տալ կոմունիստներին: Իսկ լավ կոմու-
նիստ լինելու համար կոմյերիտականներին պետք
ե ամենից առաջ գիտություն: Հենց այդ պատ-
ճառով իմ առաջնակարգ հոգան եր իմ սանիկ-
ների՝ կոմյերիտմիության շեմքը նոր վորք դրած
տղերանց ուսման գործը կարգի գցելը:

Ժողովից հետո նրանք կպան ինձ, ինչպես
ձանձերը մեղրահացին, զանազան հարցերով:
Ամեն մեկը ուզում եր թարմ մարդու առաջ իր
միտքը պարզել:

— «Ի՞նչ բան ե Խորհրդային Իշխանությունը»—հարցնում ե մեկը:

— «Ինչու մեզանում մասնագետները մեծ ռոճիկ են ստանում»—զարմանում ե մյուսը:

— «Ե՛, տղերք,—ասում եմ,—ձեզ պետք ե անսլատճառ քաղցրագիտությամբ պարապել, թե չե դուք ինձ կհոշոտեք ձեր հարցումներով»:

Ասված ե ու արված: Հենց վոր չորեքշաբթին հասնում ե, յերեկոյան տղերքը հավաքվում են գործարարանի գրասենյակում: Նստոտում են զանազան սենյակներում, մի սենյակում չեն տեսեղավորվում, ու սկսվում են զրոյցները: Զրոյցնում ենք նրանց հետ յետ ու ելի յերկու ընկեր, վոր ինձ ոգնության են ուղարկված, զանազան նյութերի շուրջը: Թե ինչու բանվորները կովում են բուրժուաների գեմ, ինչու Խորհրդային իշխանությունը կոչվում ե բանվորա-զյուղացիական, ովքե՞ր են կոմունիստները,—նյութշատ: Յերբեմն այնչափ տարվում եյին զրոյցներով, վոր ելեքտրական լապտերը սկսում եր քթթել՝—ուշ ե, լույսը շուտով կհանդի:

Մի որ պատահեցի տղերանց՝ գործարանային ընթերցարանի դուանը:

— «Ի՞նչ եք կարդում»—հարցնում եմ:

Վերցրի զրքերը, տեսնում եմ՝ փուչ, դատարկ բաներ են բոլորը: Մտածում եմ՝ պետք ե ող-

նել: Գնացի զրադարձապետի մոտ, պայմանավորվեցի: Հետեյալ որը տղերքը գալիս են գըրքերը փոխելու, իսկ պատին արդեն պլակատ ե կպցրած — «Գրքեր, վոր կկարդաս հայձույցով ու ոգուտով»: Գրադարձանում մենք ընտրեցինք այն գըրերը, վորոնց մեջ նկարագրված ե աշխատավոր մարդկանց կյանքն ու կոփքը, և ցուցակ կազմեցինք: Ու ի՞նչ եք կարծում: Մի անգամ վոր այդ գըրերը ձեռներն ընկավ, այնուհետև միայն այդ գըրերն եյին պահանջում:

Սակայն, իսկական տոնը մեզ համար այն որն եր, յերբ մեզ հաջողվեց ծննդյան նախորյակին գործարանային ճաշարանում դասախոսություն սարքել: Դասախոսությունը կոչվում եր «Հրովորով», իսկ մոգական լապտերը տեղն ու տեղը ցույց եր տալիս նկարներ, վոր պատկերացնում եյին դասախոսի արծարծած մտքերը: Դասախոսը պատմում եր, թե վորպիսի արյունոտ պատմություն ունի ներկայիս քրիստոնեական կրօնը: Մոգական լապտերի պատկերները ցույց եյին տալիս տանջանքի գործիքները, վորոնցով չարչարում եյին կարծեցյալ վհուկներին, խարույկները, վորոնց վրա վառում եյին նրանց, վոր հանդինում եյին վեճի բոնվել քահանաների ու վարդապետների հետ: Գործարանի պահապանը, վոր մի սպիտակահեր, առաքինի ծերուկ եր, վոր

շատ խիստ վըդովկում եր. — Խոսքը կաթոլիկ յեկեղեցու մասին երև և վոչ թե ուղղափառ: «Կաթոլիկները մեզ համար որինակ չեն. ուղղափառները այդպիսի բաներ չեն անում»: Բայց յերբ դասախոսը սկսեց պատմել աղանդավորների հալածանքների մասին ցարերի որով, մեր ծերուկը լոեց:

Ամառը մեր գործերը ավելի ևս լավ ընթացն: Կիրակիները մենք հաճախ գնում եյինք դաշտ կամ անտառ: Յերբեմն նավակ եյինք նըստում ու լողում դեպի կանաչ կղզիները: Այնտեղ հավաքում եյինք թիթեներ, մողեսներ, միջատներ, արոտներ ու լսում եյինք յերիտասարդուսուցի (վոր նոր սկսել եր դաս տալ գործարանային-աշակերտության դպրոցում) պատմվածքները ընության կյանքից:

Ժողովներին մենք քննում եյինք գլխավորապես գործարանի առորյա կյանքի հարցերը:

Յուրաքանչյուր հարցի շուրջը արտահայտվում եյին մի քանի տասնյակ տղաներ:

Տրված ե, որինակ, աշխատանքի պահպանության հարցը. իսկույն Մարտինը խոսք ե խընդըռում — «Ահա մեր ներկայացուցիչը աշխատանքի պաշտպանության մեջ ուժեղ ներկայացուցիչ ե: Ապա ինչո՞ւ փականագործական համքարում մինչեւ այժմ ել կտուրը կաթում ե: Սա արդեն դառ-

նում ե մշտական անփութություն և վոչ թէ աշխատանքի պաշտպանություն»:

Մարտինին հետևում են-մյուսները: Սկսում են մանրույթներից, բայց նրանցից անցնում են մեծ հարցերին, գործարանի ու ամբողջ յերկրի առաջ ծառացած ընդհանուր խնդիրներին: Իսկ բջիջի ներկայացուցիչները գործարանային. կոմիտեյի զանազան հանձնախմբերում արդեն խոսում եյին վոչ միայն յերիտասարդական գործերի մասին, այլև շոշափում եյին ընդհանուր ընույթ կրող հարցեր: Պատահում ե ինձ գործարանային կոմիտեյի նախագահը և ասում. — «Լա՛վ ե, կոմիտեի հարցերը աճում են: Նիստերին յերբեմն մեծերից լավ են խոսում, ըստ եյության են արտահայտվում»:

Այդպես, քայլ առ քայլ առաջ եր գնում մեր կոմիտեի տական ուսումը: Քաղղորդիտությունը բերանացի արին, վորպեսզի անկուսակցական-ների առաջ չկարմրեն, յեթե վորևե հարցով գիմեն, և վորպեսզի հենց իրենք ել լավ ըմբռնեն շրջապատի կյանքը: Մյուս գիտություններին ևս մոտեցան և ամեն տեսակի հավատն առ աստված, արքայություն, դժոխք, սատանաներ ու հրեշտակներ միանգամայն արմատախիլ արին իրենց գլխից: Աշխատանքի մեջ մի քիչ կոկե-

ցին, սովորեցին ոգնել կուսակցությանը նըա
գործերի մեջ:

ԿՈՄՅԵՐԻ ՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՐԻ ՏԱՍՏԱՐԴՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՆ Ե.

Շուտով ինձ հաջողվեց իրականացնել և մի այլ
խոստումս, վոր արել եյի տղաներին: Յերբ մենք
կազմում եյինք կոմյերիտմիության բջիջը, յերի-
տասարդ բանվորների իրավունքները խախտված
եյին անխղճորեն: Տղերքը աշխատում եյին նույն
չափ, վորքան և հասակավոր բանվորները, ու
բացի դրանից, կատարում եյին ուժերից վեր
աշխատանք: Վարպետները բոլորովին չեյին հո-
գում նրանց ուսման մասին ու դարձրել եյին
նրանց մի տեսակ բանբերներ (դես ու դեն վա-
զողներ):

Բջիջը անմիջապես կռվի մտավ վարպետների
ու վարչության հետ: Դործկոմը, խելքի ընկնե-
լով, նրանց ոգնության հասավ ու հաղթությունը
տարված եր: Պատահիները սկսեցին աշխատել
վեց ու չորս ժամ: Այժմ, ինձ հանդիպելիս,
նրանք խորամանկորեն աչք եյին անում, իրեն
իրենց համախոհին: Մինչ այդ նրանք բոլորո-
վին չեն ել իմացել, վոր ըստ Խորհրդային որենք-
ների նրանք պետք ե աշխատեն այդքան ժամ:

Մւժերից վեր աշխատանքից նույնպես միան-
գամայն ազատվեցին: Վարպետները, վոր ընտե-
լացել եյին տղաներին բանեցնելուն, սկզբում
մի քիչ փնթվնթացին, բայց շուտով ստիպված
յեղան հաշտվելու անխուսափելիության հետ: Մի
բան միայն մտահոգություն եր պատճառում ինձ
բավական յերկար ժամանակ—գործարանային
աշխակերտության դպրոց հիմնելու խնդիրը: Հա-
րուստ վորձառություն ունեցող հին բանվորները
աստիճանաբար դուրս են գալիս շարքերից: Նրանց
փոխարինողները պետք ե լինեն նույնքան բան-
իմաց ու պատրաստված: Բացի դրանից, մենք
չենք ուզում, վոր մեր բանվորները գիտենան
միմիայն իրենց դաղդյանը ու այլ բանի մասին գա-
ղափար չունենան: Հարկավոր են այնպիսի դպրոց-
ներ, վոր պատրաստեն բանվոր-քաղաքացիներ:
Հենց այդպիսի դպրոց ե գործարանային աշա-
կերտության դպրոցը:

Յես հարկադրված յեղա հաճախել տասնյակ
զանազան նիստեր, մինչև վոր հաջողեցը ի այդ
գործը, չիմնական խոչընդոտը միջոցների պա-
կասն եր: Բոլոր հիմնարկներում ինձ ընդունում
եյին սիրալիր—«Ուզում եք Փարզավուչի դպրոց
հիմնել: Հարկավոր, ոգտակար գործ ե»:

Իսկ յերբ բանը փողին եր հասնում, հուսա-
հատորեն թոթվում եյին ուսերը:

— «Ուրախ կլինեյինք ոգնելու, բայց առանց
այդ ել տեղական բյուջեն խեղդում ե մեզ։ Այս
չափ սահմանափակ են մեր միջոցները, վոր ամեն
ամիս կարկատաններով ենք զբաղվում, մեկից
խլում, մյուսին տալիս»։

Բայց վերջիվերջո հաջողվեց։ Մեր դպրոցի
հարցը արժանացավ նահանգական կենտրոնի
ուշադրությանը. միջոցներ բաց թողին. սկսվեցին հարյուրավոր նոր հոգսեր—շենք գտնել, կա-
հավորել այն, ուսուցիչներ հրավիրել։

Վերջապես դպրոցը բացվեց։ Յես վողջունեցի
կոմյերիտական բջիջի անունից և, խոստովանում
եմ, հալարտանում եյի յերախտիքով։ Այժմ ել,
յերբ պատահում ե ինձ լինել այդ տեղերում,
զգում եմ մի արտասովոր բավականություն՝
այդ դպրոցի աշակերտներին տեսնելիս, իմ ստեղ-
ծած դպրոցի։

ԱԿՏԻՎ ՅԵՐԻԾԱՍՏԱՐԴՆԵՐԸ.

Ճիշտն ասած, յերբ ասացի «իմ ստեղծած»—
զա արդեն պարծենկոտություն եր։ Դպրոց չեր
բացվի առանց մի շարք տղաների, վոր առաջին
կարգերում եյին կանգնած։ Դրանք ամենից ավելի
աչքաբաց ու շարժուն կոմյերիտականներն եյին՝
բջիջի ակտիվը։ Նրանցից շատերը արդեն կուսակ-

ցության շարքերումն են և արդեն դառել են
կոմունիստներ։ Նրանց փոխարեն այժմ աշխա-
տանքը զեկավարում են ուրիշները, վորոնք գուցե-
նրանց հետ միաժամանակ են մտել կոմյերիտ-
միության շարքերը, բայց վորոշ ժամանակ չեն
մտել աշխատանքին։ Միանգամից չեն ստեղծ-
վում ակտիվիստները։

Վերջիվերջո ամեն մի կոմյերիտական պետք
ե լինի ակտիվ, գործոն։ Ամեն մի կոմյերիտա-
կան պետք ե ունենա իր աշխատանքը, վոր հանձ-
նարարում ե նրան Միությունը և վորի համար
պատասխանատու յե։ Միայն այդպիսի կոմ-
յերիտականը կկարողանա այնչափ պատրաստվել,
վոր դառնա լավ կոմունիստ։

Գ Յ Ո Ւ Ղ Հ Հ.

Սակայն, քաղաքի կոմյերիտմիությունը կոմ-
յերիտմիական ըստանիքի կեսն ե միայն։

Դեռ նոր եյի յես կարգի գցել իմ բալիկին—
գյուղատնտեսական մեքենաների գործարանի
բջիջը,—ինձ կանչեցին գավառական կոմիտե։
Գնացի, բարեւեցի։ իսկ ինձ համար արդեն գոր-
ծուղղում եյին պատրաստել՝ գնալ զյուղ, գյու-
ղական բջիջներին ոգնության։

Գնացք նստեցի. շառաչեցին անիվերը, ձըմ-
րան քամին աղմկեց պատուհանների յետեր։ Շարժ-
վեցին վագոնները։ Պատուհաններից յերկում եր
սովորական ձմերային պատկերը—անծայր ձյու-
նապատ դաշտեր, ձյունային հանդերձներով զար-
դարված անտառներ, ձյունածածկ խրճիթներ,
վորոնց ծխնելույզներից ծորում եր ծուխը բա-
րակ թելով։ Կեսորին յես արդեն կայարանում
սակարկում եյի մի գյուղացու հետ, վոր իր
փայտե սահնակով տուն եր վերադառնում հենց
այն գյուղի մոտով, վոր յես ընտրել եյի առա-
ջին այցելության համար։

Սառնամանիքը սաստկանում եր ու յես
ստիպված եյի, տաքանալու համար, կես ճամ-
բան վազել, ցատկտելով սահնակի յետեից։

ԿՈՒԱՐԱՆԵՐԸ, ԶԲԱԴՈՐ ԳՅՈՒՂԱՑԻՒԹ ՈՒ
ՄԻՋԱԿՆԵՐԸ.

Կառապանիս հետ անմիջապես տաք զրույցի
բռնվեցի։ Առաջինը նա սկսեց, հարցնելով, թե
ո՞ւր եմ գնում, ինչո՞ւ, մի խոսքով՝ բանավոր
հարցաթերթ տասնյակ շեշտակի, զահլա տանող
հարցերով։ Ստիպված եյի պատասխաննելու։

— «Ուրեմն կամսամո՞լ ես,—դարձավ դե-
պի ինձ խոսակիցս, շփելով իր սառած բեխերը։

Կամսամոլին մենք համակրում ենք, մենք — չքա-
վորներս։ Բայց այստեղ նրան չեն համակրում։
Յես հետաքրքրեցի։ Հարցնում եմ՝ ինչո՞ւ չեն
համակրում, ինչից ե սկսվել այդ չհամակրելը։
Համակրում, ինչից ե սկսվել այդ չհամակրելը։
Պատասխանում եր հաճույքով։ յերկում եր, վոր
արտաքերում ե վաղուց ի վեր իրեն զբաղեցնող
ու հուզող մտքերը։

— «Արի տես, թե ինչ տեսակ բան ե ստաց-
վում։ Կուլակի մասին, վորը բանվոր ունի ու
մյուսներից ել հյութ ե ծծում, խոսելը ավելորդ
ե։ Նրա համար կամսամոլը նույնն ե, ինչ վոր
խունկը՝ սատանայի համար։ Իսկ միջակ գյու-
ղացին—նաև լուրջ ու գործնական ե։ Նա դեմ
չե, բայց նա գործ ե սիրում։ Տնտեսությունից
մի բան ցուցադրեցեք և վոչ թե անվերջ ժողով-
ներ ու խոսակցություններ, խոսակցություններ
ու ժողովներ։ Զքավորներն ել թեև այնքան ել
բավական չեն, բայց և այնպես տեսնում են,
վոր կամսամոլը իրենց շահերի պաշտպանն ե,
վոր կամսամոլը իրենց շահերի պաշտպանն ե,
այն ել ասեմ, վոր կոմ-
ուստի և համակրում են. այն ել ասեմ, վոր կոմ-
ուստի մեջ ամենից ավելի հենց այդ չքափոր-
յերիտասարդությունն ե։ Իսկ յեթե կամսամոլ-
ները գործով զբաղվելին, բոլորովին այլ պատ-
կեր կատացվեր։ Այ, վերցնենք թեկուզ հարեան
գավառակը։ Գյուղացիական տնտեսության խըմ-
բակ են սարքել, թե ի՞նչպես կարելի յե առանց

մաղթանքի բերք ստանալ. ցանքսի, սերմանման, տափանման մասին են խոսում: Փորձի համար մի փոքրիկ հողամաս են վերցել ու, իսկապես, բերքը շատ ավելի հաջող եր, քան հարևան գյուղացիների մոտ: Պարզ է, վոր այժմ այդ գյուղացիներին»:

— «Ապա կուլակները,— հարցըի յես,— Նրանք ել այնտեղ փոխեցին իրենց վերաբերմունքը դեպի կոմյերիտմիությունը»:

— «Վորտեղից, նրանք ատամներն են կրծքացնում: Պարզ է—այժմ կամսամոլները խորհրդից ել, կոռպերատիվից ել նրանց կվոնդեն»:

ՄԻՌ ՀՐԱՄԱՅԻՐ, ԱՅԻ ԱՌԱՋՆՈՐԴԻՐ.

Ճիշտ ժամանակին հասանք: Անմիջապես գտա գյուղական բջիջի քարտուղարին: Կեղտոտ, մանկական աղմկով լի խրճիթում թեյ եր խոժում կոտրած պնակից. հրավիրեց ինձ ևս հետևելու իրեն:

— «Տաքացի՞ր, ընկեր, ճամբին մրսած կլինես, իսկ հետո կզնանք ընթերցարան—յերեկույթի:

Տաքացանք ու գնացինք: Ճանապարհին պատահող գյուղացիները ճամբում եյին մեզ խոժոո հայացքներով: Այդ հանգամանքը իսկույն աչքիս խփեց:

— «Քեզ այստեղ այնքան ել չե՞ն սիրում»— հարցըի:

Տղան, շակած, շարժեց զլուխը: Յերեսում եր, վոր այդ հանգամանքը նրան ել շփոթեցնում եւ:

— «Անբավական են: Չե՞ վոր հասարակական գործերով հաճախ ստիլված եմ նրանց սեղմել: Կպուսաս, կհրամայես,— նրանք ել փքում են»:

Խրճիթ-ընթերցարանը գրեթե դատարկ եր: Մի քանի ջահել տղերք ման եյին գալիս աննպատակ ու յերկու աղջիկ քրքջում եյին, հեռավոր անկյունում սեղմված:

— «Հասակավորները լինում են ձեզ մոտ»— դարձյալ դիմեցի բջիջի քարտուղարին:

Նա ավելի ևս շփոթվեց: Անկառ պատասխանից կարելի յեր հասկանալ, վոր խրճիթ-ընթերցարանում լինում ե միայն յերիտասարդությունը, իսկ հասակավորները—«տգետ են, ընթերցարանը չեն սիրում»:

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԶՊԵՏՔ Ե ԱՇԽԱՏԵԼ.

Այն բջիջը, վոր իմ ճամբին առաջինը հանդիպեց ինձ, շատ վատն եր: Վոչ թե տղերքը փչացած եյին ու չեյին ուղում վոր աշխատանքը կարգին ու հաջող ընթանա, այլ ուղղակի չը գիտեյին, թե ինչ կերպ տանեն աշխատանքը: Հա-

սակավոր գյուղացիներին փախցրել եյին խրճիթ-ընթերցարանից. կովել եյին ուսուցչուհու հետ սոսկ այն պատճառով, վոր նա հրաժարվել եր մի ինչ վոր ներկայացման մասնակցել. փոխանակ գյուղացիներին համոզելու—հրամայում եյին. Այդորինակ աշխատանքի դառն պառղ-ները շատ շուտով յերկան յեկան։ Բջիջը չեր աճում, նոր անդամներ չեյին գրվում. գյուղացիությունը խուսափում եր բջիջից. Կուսակցությանը վոչ մի ողնություն բջիջը, իհարկե, չեր հասցնում. Ընդհակառակը, անտեղի արարքներով նա միայն չարացնում եր գյուղացիներին։

Յերկար ժամանակ չարչարվեցա յես անհաջող կոմյերիտականների հետ, վորպեսզի հասկացնեմ իրենց գործնեյության անձոռնիությունը։ Սկզբում նրանք առարկում եյին իմ պատճառարանությունների դեմ։ — «Ինչպես թե. չե՞ վոր հարկան բջիջներում նույնն ե կատարվում։ Միայն կլիմուխինի գավառակում քո ասած ձեռվ են աշխատում, բայց նա ուրիշ գավառակ ե, իսկ մեզանում այլ կարգեր են տիրում։» Բայց՝ կաթիլը քար ե ծակում։ Դժվարությամբ, բայց և այնպես համոզեցի նրանց, ինքս ել վորոշեցի անպատճառ լինել կլիմուխինի գավառակում։ Պարզվեց, վոր այդ գյուղը կես վերստի վրա յե գըտնվում։ Այնտեղի գյուղացիներից մեկը, վորիը բա-

ըեկամի հարսանիքին եր յեկել ու այժմ, մի քիչ զինով, ուստի և բարյացակամ, տուն եր վերադառնում, համաձայնեց տանել ինձ ձրիաբար։ — «Գուցե մի քանի կոպեկ նվիրես ծխախոտի համար»։

ԿԼԻՄՈՒԽԻՆԻ ԳԱՎԱՐԱԿՈՒՄ.

Ինձ ընդունեցին մեծ ուրախությամբ։ Քաղաքից շատ սակավ են այցելում նրանց, իսկ նոր, թարմ մարդուն կարելի յե լավ ոգտագործել։ Խրճիթում, ուր ինձ տեղ եյին հատկացրել, նեղվածք եր, վորովհետեւ մի խումբ տղաներ ու աղջիկներ յեկել եյին ինձ լսելու։

Բայց ինձ ավելի զբաղեցնում եյին նրանց պատմածները։

— «Ինչպես ենք աշխատում, — կրկնեց իմ հարցը մի բարձրահասակ յերիտասարդ, վորի վերին ըլթունքին հազիվ նկատելի յեր աղվամազը։ — Աշխատում ենք մեր ուժերի հսարապորության չափ։ Ահա — ուսուցիչը մեզ լավ ոգնում ե. թե խրճիթ-ընթերցարանում և թե՛ գյուղատնտեսական խմբակում նա մեր առաջին դեկավարն ե։ Նա կարմիր բանակում ե ծառայել ու այս կամ այն կուսակցականից պակաս չե։ Ինչպես են վերաբերում գյուղացիները։ Դե՛,

ինչպես վերաբերվեն. չե՞ վոր մենք ինքներս ել գյուղացիներ ենք: Դե, իհարկե, գալիս են յերեմն այս կամ այն հարցով, վորովհետև մեր տղերը գիտակից են, թերթեր են կարդում: Ահա մերոնցից մեկին զյուղխորհուրդ ընտրեցին. կոռապերատիվում նույնպես կոմյերիտական ե աշխատում. նրանց ընտրեցին հօժարակամ, առանց վորեւ ստիպման»:

— «Ուրեմն վոչ մի անհամաձայնություն չկա՞»:

Տղան մտասուզվեց մի քանի ակնթարթ.

— «Չե՛, վոր եղակես ասեմ—խարած կը լինեմ: Անհամաձայնություն կա ու այն ել այնպիսի, վոր գործը քիչ է մնում սպանության հասնի: Բայց ո՞ւմ հետ: Այնպիսի զյուղացիների, վոր ավելի շուտ առևտրականներ են: Նրանք կոմյերիտականներին ատում են: Մեր պատի թերթը քանի՛ անդամ սովոր են ընթերցարանի մոտի տախտակից, իսկ թերթերում գրողներին սպառնացել են թակել: Քաղաքի թերթին թղթակցող մեր տղաներից մեկի վրա հարձակվել եյին դիշերով ու գլուխը ջարդել»:

ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՏՐԱԿՏՈՐ.

Հետեւյալ որը յես ներկա եյի հասակավորների պարապմունքին: Պարապում եյին և մի բուքա-

վոր զյուղացիները, և՝ զյուղական ծանր կյան. քից վաղաժամ պառաված գեղջկուհիները: Ուսուցիչը սովորեցնում եր կարդալ ու նրանք արդեն կարողանում եյին կարդալ—

— «Մենք ստրուկ չենք»:

Յերբ աշակերտները խմբովին կարդացին այդ խոսքերը, ուսուցիչը անմիջապես դիմեց ամենից առաջը նստածին—

— «Դե՛, կարդալը՝ կարդացիք, իսկ ի՞նչ ե նշանակում այդ»:

Ու աշակերտը, առանց մի ըոպե անգամ շփոթվելու, սկսեց պատմել ներկա կարգերի ու ցարական ժամանակների տարբերության մասին, այն ժամանակների, յերբ կալվածատերերը կարող եյին իրենց ցանկացածի չափ այպահել զյուղացիներին, յերբ զյուղացիները հող չունեյին, իսկ կալվածատերերը իշխում եյին հազարավոր դեսյատիններին:

Յերբ մենք խըճիթ եյինք վերադառնում, հրապարակում, հրդեհաշեջ մեքենայի մոտ զյուղական մի մեծ ժողով եր հավաքված: Մուտեցանք: Խոսքը, ինչպես պարզվեց, տրակտոր ձեռք բերելու մասին եր. հարցը բարձրացը ել եյին կոմյերիտականները,

— «Տրակտոր, իհարկե, անհրաժեշտ ե,— հաստատում եր մի թխաղեմ, բեխավոր զյուղացի»:

Ահա, հարեան կլիմովկայում նույնիսկ ելեքտրականություն են անցկացրել խրճիթներում, իսկ մենք շարունակում ենք տանջվել մեր պապենական արորով։ Կոմյերիտականները ուղիղ են ասում։ Մեկ մտածեցեք, թե վորքա՞ն ձիյերի կփոխարինի տրակտորը։

Դեռ յերկար վիճում եյին գյուղացիները, բայց վոչ այն մասին, թե պե՞տք ե, արդյոք, տրակտորը։ Վիճում եյին, թե արդյոք վո՞րտեղից ավելի հարմար ե տրակտոր գնելը, ի՞նչ պայմաններով ու ի՞նչ կերպ միասին ոգտագործել այն։

ԿԱՊՀ ՔԱՂԱՔԻ ՀԵՏ.

Տանը՝ իմ տանտեր՝ կոմյերիտականը յերկար ժամանակ խոստովանում եր իր կոմյերիտական անհաջողությունները։ Ամենահիմնական պակասը այն ե, վոր գյուղում շատ սակավաթիվ են բանիմաց, զիտակից մարդիկ։ Այս կետում ոգնություն ե հարկավոր։ Հայտնի յե, վոր գյուղը առանց քաղաքի առաջ չի գնա։ Քաղաքը պետք ե ոգնի գյուղին վոտքի կանգնելու։ Այդ գործում առաջին դերը պետք ե խաղան քաղաքի կոմյերիտականները։ Նրանք պետք ե ոգնեն գյուղական յերիտասարդությանը լուսավորվելու, ուղիղ ճանապարհ դուրս գալու։ Կոմյերիտմիու-

թյան քաղաքային մասը պետք ե գյուղական կոմյերիտմիության առաջնորդը դառնա։

Յերբ հեռանում եյի կլիմուխինի գավառակից, տրամադրությունս բարձր եր։ Այստեղ կոմյերիտականները իսկական առաջապահ ջոկատ եյին լուսավորության ու կուլտուրայի ճակատում։ իրենց որինակով նրանք վարակում եյին մնացած ամբողջ գյուղացիությունը։ Բայց այնուհետև յես այլևս վոչ մի տեղ չպատահեցի այդորինակ կարգին աշխատանքի, Գրեթե բոլոր բջիջների անհաջողությունը բացատրվում եր աշխատել չիմանալով։ Առանց քաղաքի ողնությանը գյուղական կոմյերիտականները չպիտի կարողանան լուծել իրենց առաջ դրված խնդիրները։

ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆԸ ԽՈՒԼԻՒԹԱՆՈՒԹՅԱՆ ԹՇՆԱՄԻ ՅԵ.

Մարտինը դիմավորեց ինձ կայարանում, վորովինետև յես գրել եյի բջիջին, թե շուտով կվերադառնամ։

— «Ախպե՞ր, — վողջունեց նա ինձ, — յերբորդ որն ե, վոր եստեղ քո գալուն եմ սպասում։ Քեզ հետ զրուցելու մեծ կարիք ունեմ»։

Ճանապարհին Մարտինը ամբողջ ժամանակ պատմում եր ինձ մեր բջիջի գլխին յեկած դրժ-

բախտության մասին։ Մի առն որ գործարանում կորիվ ե յեղել ու այդ կովին մասնակցել են յերկու կոմյերիտականներ, վոր խիստ հարբած են յեղել։ Մարտինը պնդում է, թե այդ արարմունքով նրանք արատավորել են կոմյերիտմիությունը ու պետք ե անպատճառ վտարվեն նրա շարքերից։ Մյուս տղերքը ուզում են նրանց ծածկել, ասելով, թե գեռ շատ ջանել են, առաջին անգամ են մեղանչել ու հեշտությամբ կուղղվեն։ Պետք եր այդ գործը քննել։

Մի ժամից յես արդեն բջիջի ժողովումն եյի։ Մեղավոր տղերքն ել եստեղ եյին։ Վոչ վոք չեր կարծի, թե դրանք են յեղել դալմաղալ սարքող ու խուլիգանություն անողները։ Նստած եյին լուռ, գլխիկոր, ասես մի ինչ վոր դաժան մահապատժի սպասելով։ Բջիջի քարտուղարը մի քանի խոսքով պատմեց բանի նեյությունը։

Յետեկի կարգերից մեկը կանչեց.—

— «Դատարկ բաներ են»...

Ամբողջ ժողովը վըդովկեց ու աղմկեց, ինչպես մեր գետը փոթորկոտ յեղանակին։

— «Ինչպես թե դատարկ բաներ։ Ել ինչու յեն նրանք կոմյերիտական կոչվում։ Խուլիգանություն անելու, կոփօվ սարքելու համար։ Պետք ե նրանց մի լավ դաս տալ, վորպեսզի ուրիշ անգամ այդպիսի ոյիններ չսարքեն»։

Մի կերպ տղերանց հանգստացրինք։ Խոսքը տվինք իրենց, վոր արդարանան։ Մեկը վեր կացավ տեղից, և մի առանձին բան չասաց։

— «Ել ի՞նչ արդարանալ... Հանցանքը պարզ ե, ուզում եք՝ ներեցեք, ուզում եք՝ գլխատեցեք»։

Մարգարը ծոցից մի ինչ վոր դիրք հանեց։ Իլյիչի ճառն եր մեր յերբորդ համագումարում։ Նա կարգաց այն կտորը, ուր Իլյիչը ասում եր թե կոմունիստական բարոյականությունը բանվոր դասակարգի կովին ոգնելու, հեղափոխությանը ոգնելու մեջ ե կայանում։

— «Արդյոք հարբեցողն ու խուլիգանը վնասում ե հեղափոխությանը։ Անշուշտ։ Նա խլում ե իր ուժերը ոգտակար գործից, նա խանգարում ե ուրիշներին այդ ոգտակար գործով զբաղվել։ Կոմյերիտականը պետք ե սովորի։ իսկ կարող ե խուլիգանը լավ սովորել. իհարկե, վո՞չ»։

Ժողովը աղմկում եր, հավանություն տալով ճառախոսին։ Նա չեր ուզում թողնել խուլիգաններին իր շարքերում։ Բանաձեկի մեջ այսպես եր ասված— «Յեւկու մեղավորներին հաւարարել խատագույն հանդիմանություն, նախազգուշացնելով, վոր կրկնության դեպքում նրանի կվտավեն Կոմյերիտիության շարժերից»։

ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ՀԶՈՐՈՒԹՅԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ Ե

Այդ յերկու տղաները ուղղվեցին, բայց մի ամսից մենք հարկադրված եյինք վտարել մի ուրիշն, վորը մեր վորոշումներից և վոչ մեկը սրտին մոտ չեր ընդունում։ Նա չեր հաճախում ժողովները, անդամագնար չեր տալիս ու խուլիդանություն եր անում անկուսակցականներից վոչ պակաս։ Ամբողջ բջիջը, ամբողջ կոմյերիամփությունը չեն կարող թույլ տալ, վոր առանձին տղաներ նրա վորոշումների դեմ գնան։ Զե՞ վոր այդ վորոշումները մտածված ու քննված են բազմակողմանիորեն։ Իենց այդ վորոշումներն են, վոր պետք ե ամեն կերպ ոգնեն կոմյերիականներին դառնալ կոմունիստներ։ Ով նրանց դեմ ե գնում—նա խախուռմ ե կարգապահությունը։ Իսկ ի՞նչ ե կազմակերպությունը առանց կարգապահության, այսինքն՝ կազմակերպության բոլոր անդամների միասնական կամքի։ Բանաստեղծը մի առակ ունի, վորի մեջ պատմում ե, թե ինչպես խեցգետինը, կարապն ու գայլաձուկը ցանկացել են միասին սայլը տանել։ Բայց ցավը նրանումն եր, վոր ամեն մեկը գործում եր ըստ իր ցանկության ու հասկացողության—կարապը գեպի ամպերն եր ձգտում, խեցգետինը՝ յետ սողում, իսկ գայլաձուկը՝ դեպի ջուրը քաշում։ այդ-

պիսի միահամուռ ջանքերի շնորհիվ «սայլը մինչև որս իր տեղումն ե»։

Իսկ կոմյերիամփությունը լծվել ե մի հսկայական սայլի։ այդ սայլի վրա նա պետք ե հասցընի յերիտասարդությունը մինչև կոմունիզմի ճիշտ ըմբռնումը։

Առանց կարգապահության այդ չես անի։

ԿՈՄՅԵՐԻԱՄՓՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆԸ
ՓՈԽԱՐԻՆՈՂՆ Ե.

Զկա ընտանիք, ուր մեկ պակասավոր չլինի։ Բայց մեր բջիջում այդպիսիները յերկույթերեք եյին, վոչ ավել։ Մյուս տղերքը պինդ մտածում եյին, թե ինչպես յուրացնեն գրավիչ գիտությունները։ Ահա թե ինչու նրանցից շատերը արդեն կուսակցության շարքերումն են, կոմունիստ են դարձել։

Իսկ այդ շատ կարեոր ե։ Կուսակցությունը նույնն ե, ինչ վոր զինվորների շղթան կովի դաշտում։ Թշնամու գնդակները կարող են մեկը մյուսից հետո բացեր կազմել այդ շղթայի մեջ, մյուսներին հողնածությունն ե ստիպում դուրս գալ շարքերից, բայց նրանց պետք ե փոխարինեն պահաստում գտնվածները. բացերը կծածկվեն, շղթան կմաս նույնչափ զորեղ ու անընկճելի։ Իսկ իր

համար Կոմյերիտմիությունը նույնպես փոխարինողներ ե պատրաստում. այդ գուք եք՝ պիոներներդ։ Դուք մեծանում եք Կոմյերիտմիության թերի տակ. Կոմյերիտմիության արծարծած մտքերին արյուն ու մարմին ե տալիս ձեր աշխատանքը. ձեր առաջնորդները կոմյերիտականներն են ու նրանք, մյուս կոմյերիտականների հետ միասին, մտածում են այն մասին, թե ինչպես ավելի լավ ու կանոնավոր դարձնեն ձեր աշխատանքը։ Այնպես, ինչպես կոմյերիտականները պիոներների մասին, կուսակցությունը հոգում ե Կոմյերիտմիության մասին։

Ահա, կուսակցության վերջին XIV համագումարում ընկ. Բուխարինը, կուսակցության ամենալավ աշխատավորներից մեկը, Վ. Ի. Լենինի ամենամերձ աշակերտը, զեկուցում կարդաց Կոմյերիտմիության խնդիրների մասին։ Բանից դուքս ե գալիս, վոր կուսակցությանը լավ փոխարինողներ պատրաստելու ու այդ գործի մեջ ըստ հնարավորության ավելի յերիտասարդություն գրավելու համար այժմ, ավելի, քան յերբեք, պետք ե սովորել։

Սովորել՝ շրջապատի կյամբը հասկանալ։ Նրա մեջ կան շատ բաներ, վոր վիճաբանություն են ծագեցնում։ Մեր թշնամիները ասում են, թե Խորհրդային Միության մեջ բանվորը նույնչափ-

ձնչված ե, ինչպես և կապիտալիստների ժամանակ։ Ճի՞շտ ե դա, իհարկե վո՞չ։ Բայց այդ զըրպարտիչներին ըստ արժանվույն պատասխանելու համար պետք ե, վոր ինքներս լավ քննենք, ուստիմնասիրենք այդ հարցը։

Իմացի՛ր յո անելի՞լ։ Կոմյերիտականը պետք ե լինի առաջինը ամեն մի գործի մեջ։ Կոմյերիտականը պետք ե ոգնի բանվորին ավելի գիտություն, իր մասնագիտության մեջ ավելի փորձառություն ձեռք բերելու։

Պետք ե վերջապես սովորել զվարդ ապրել։ Դա շատ կարևոր է։ Կոմյերիտմիությունը չպետք ե լինի տաղտկալի «գիտության տաճար», ուր ամեն մեկը անգիտորեն խեղզվում ե, հորանջելով։ Կոմյերիտմիության մեջ պետք ե լինի ուժախություն. ուրախությամբ ու զվարթությամբ պարուրված պետք ե լինի աշխատանքը։ Պակաս են խաղերը ձեզ մոտ, պիոներներ, իսկ խելացի խաղեր անհրաժեշտ են։ Խաղեր պետք ե լինեն նաև Կոմյերիտմիության մեջ, վորպեսզի ժիր ու կենսուրախ լինեն կոմյերիտականները։

Ա.ՌՈՂՋ ՄԱՐՄՆԻ ՄԵԶ—Ա.ՌՈՂՋ ՎՈԳԻ.

Մեր բջիջը այստեղ ևս չվրիպեց։ Մարդ կարող ե ժիր ու կայտառ լինել միայն այն դեպ-

քում, յեթե նա առողջ է, յեթե չի զգում իրեն
ուժապառ:

Յերբ դուրս յեկա ժողովից, վորը դատեց այն
2 անպարտաճանաչ կոմյերիտականներին, տեսա
վոր բակում դույլերով ջուր են ածում գետնին:

— «Սահարան ենք շինում»—արձագանգեց
իմ հարցին կոմյերիտականներից մեկը:

Մի-յերկու որից արդեն կարելի յեր տեսնել,
ինչպես ահազին բակի մեկ ծայրից մինչև մյուսը
սահուն ու թեթև փաղում եյին չմուշկներով մեր
կոմյերիտականները—մեկը մյուսի յետեից: Իսկ
ամառը նրանք եյին ամենալավ թիավարները:
Դեպի կղզիները ճամբորդությունների ժամանակ,
վորի մասին յես արդեն պատմեցի, մենք սար-
քում եյինք իսկական նախավարական մրցումներ:

Կարմիր բանակում մեր տղերքը կլինեն, յե-
րեկի, ամենառուժեղ ու առողջ մարտիկներից:

Ահա այսպես՝ մարմնով, վոգով, ուղեղով ու
մկաններով առողջ ու մարտունակ կոմյերիտա-
կաններ են մեծանում՝ կոմունիստներին փոխա-
րինողներ...

Լոռություն տիրեց: Տղաների աչքերի առաջ
եյին կոմյերիտմիության կոփմսերի վառ պատ-
կերները, չմուշկներով սահողների ծիծաղկոտ
դեմքերը: Հարյուրավոր մտքեր եյին ծագում

գլուխներում: Այդ լոռությունն ընդհատեց փոք-
րիկ վասոն.

— «Բայց մի բան դու մեզ չպատմեցիր.
ինչո՞ւ քո կըծքին «ԿիՄ» ե կախված»:

Շարժվեց և վասոյի հարկեանը՝ վանոն.

— «Դու ասացիր, թե կոմսոմոլի լրիվ անունն
ե՝ համամիութենական Յերիտասարդության կո-
մունիստական Միություն, ապա ինչո՞ւ գրում են
հմլկթեՄ: Ի՞նչ ե նշանակում այդ լ. տառը:

Պատմողը նշանակեց այդ հարցերը իր հու-
շատետրում:

— Ել ո՞վ հարց ունի տալու:

Մյուսները լուռ եյին:

«ԿիՄ»-ի նշանակության ՄԱՍԻՆ:

— «Ճիշտ ե. յես մեծ սխալ արի, վոր չը-
պատմեցի ձեզ դրա մասին: ԿիՄ նշանակում ե
Յերիտասարդության կոմունիստական ինտերնա-
ցիոնալ*), վորի մեջ միացած են աշխարհի բոլոր
յերկրների կոմյերիտականները: «ԿիՄ»-ի նշանը
պետք ե ինձ հիշեցնե, վոր յես ամբողջ աշխարհի
աշխատավորության ազատազրման մարտիկն եմ:
Արտասահմանում առայժմ դեռ բուրժույներն

*.) ԿիՄ—ԿԻՄ—Ռուսկեն սկզբնատառերն են՝ Կոմмунист-
ический Интернационал Մոլոդежи, վոր նշանակում ե՝ Յերի-
տասարդության կոմունիստական ինտերնացիոնալ:

են իշխում։ Կոմյերիտմիության շաքերից շատերը զոհ գնացին բանտերին, կախաղաններին ու գնդակահարության, դեռ այժմ ել կոփվը ամեն որ շատ զոհեր ե տանում։ Մենք ամեն բողեք պետք ե հիշենք մեր արտասահմանյան յեղբայրներին, մտքերովս ամեն բողեք նրանց հետ պետք ե լինենք։ Մենք չպետք ե տեսնենք տարբերություն մարդկանց մեջ, ինչ ազգի յել նրանք պատկանեն։ Ամեն մի ազգի բանվոր—իմ ընկերն եւ։

Հարուսար, բուրժույլ—իմ թշնամին եւ Բուրժույներին ձեռնոտու յեւ, վոր բոլոր յերկրների բանվորները թշնամանան իրար, բայց բանվորները գիտեն, վոր նրանք ունեն ընդհանուր նպատակ ու ընդհանուր թշնամի։ «Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք»—ահա այն կոչը, վոր սարսափահար ե անում մեր թշնամիներին։ Բոլոր յերկրների բանվորների միանական ճակատի դեպքում վոչ մի ուժ չի կարող խոչընդոտ հանդիսանալ մեր հաղթությանը ամբողջ աշխարհում։

«Լ» ՏԱՐԻ ՄԱՍԻՆ.

Յես խոսեցի այն կոչումի մասին, վոր ընդունեց Կոմյերիտմիությունը առաջին համագումարում։ Վեցերորդ համագումարում, Լենինի մահից հետո, կՅԵՄ-ը անվանեց իրեն «Լենինյան»։ Հենց այդ ե նշանակում «Լ» տառը։ Լոկ

գեղեցիկ խոսքի, միայն հանգուցյալ առաջնորդի հիշատակը պատվելու համար չե, վոր ընդունել ե Կոմյերիտմիությունը այդ անունը։ Նա ընդունեց այդ անունը այն պատճառով, վոր միայն Լենինի ուսուցմանը հետեւելով, նրա պատգամների դրոշակի տակ կովելով, հնարավոր ե յերիտասարդությունից պատրաստել խկական կոմունիստները։ «Լ» տառը նշանակում ե, վոր Կոմյերիտմիությունը իր ամեն մի քայլով, իր ամեն մի շարժումով ձգտում ե իրագործել Լենինի պատգամը, նրա կտակը։

...Յերբ ջոկատային հավաքույթի ժամանակ առաջնորդը հանաքով կանչեց—

— Կոմյերիտական դառնալու յեղե՛ք պատրաստ։

Արձագանգը հնչեց պարզ ու զել—

— Միշտ պատրաստ։

Ցուրաքանչյուր պիոների կրծքում այժմ վառվում եր մի բուռն, կաթոզին ցանկություն՝ մտնել Կոմյերիտականների այդ փառավոր ընտանիքը, միանալ գալիք կոմունիզմը կերտողների մեկ ու կես միլիոնավոր բանակին։



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

եջ

Կոմյերիտմիության վորոբանի մոտ	4
Առաջին կոխմերը	13
Առաջին համագումարում	15
Բոլորը հեղափոխության պաշտպանությանը	21
Հերոսության տարիներ	23
Իլլիչի պատգամը	30
Դեպի խաղաղ ճակատը	34
Մեզ ինչո՞ւ յե պետք Կոմյերիտմիությունը	36
Կոմյերիտական ուսումը	39
Կոմյերիտմիության յերիտասարդության պաշտպաններ	44
Ակտիվ յերիտասարդները	46
Գյուղը	47
Կուլակները, չքավոր գյուղացիք ու միջակները	48
Մի՞ հրամայիր, այլ առաջնորդի՞ր	50
Թե ինչպէս չպետք ե աշխատել	51
Կլիմուխինի գավառակում	53
Գրագիտություն և տրակտոր	54
Կապը քաղաքի հետ	56
Կոմյերիտականը խուլիգանության թշնամի յե	57
Կարգապահությունը հզորության գրավականներ	60
Կոմյերիտմիությունը կուսակցության փոխարինողներ	61
Առողջ մարմնի մեջ—առողջ վորի	63
«ԿիՄ»-ի նշանակության մասին	65
«Լ» տառի մասին	66

ԽՈՐՀՐԴ. ՍՈՑ. ՀԱՆ. ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ
ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

— Հայկական սեկցիա —

Մոսկվա, Նիկոլսկի փող. № 10

Լ Ա Խ Յ Ե Ն Տ Ե Ս Ե Լ

ԳԻՆԸ

Լեռնի ՊԱՏԳԱՄՆԵՐԸ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ	15 կ.		
Լեռնի ՊԱՏԳԱՄՆԵՐԸ ԺՈՂ. ԼՈՒՍ. ՄԱՍԻՆ. Կազմեց Ն.Կրուսկակայա	20 կ.		
ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՈՒՂԻՆ և ԲԱՆ.-ԳՅՈՒՂ. ԴԱՇԻՆՔԸ, —Ն.ԲՈՒԺԱՐԻՆ 1ր. 25 կ.			
ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՀԱՐՑ, ի. Սատալին	50 կ.		
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑ, ի. Սատալին			
1905 թ. ՄԵՐ 1 ԲԱՆ.-ԳՅՈՒՂ. ՀԵՂԱՓՈԽՈՒԾՈՒՅՆՔ, Ի.ՖԼԵՐՎԱԿԻ	70 կ.		
ԻՆՉ ՎՈՐՈՇԵՑ ԿՈՒՍ. XIV ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ, Ն. ԵԼԻՎԱՐՈՎ	30 կ.		
ԻՆՉ ՎՈՐՈՇԵՑ ԿՈՒՍ. XV ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՆ, —Զ. ՌԵՎԱԼԻՆ	20 կ.		
ԻՆՉՊԵՍ ԱՇԽՈՒԺԱՑԵԼ ԳՅՈՒՂԱՌՈՒՀՈՒՐԴՆԵՐԸ, —Զ. ԼԱՎՐԵՆՅԱԿ	30 կ.		
ԿԱՐԱ ՅԵՏԿԻՆ (ԿԱՆՈԱԿԻ), Զ. ԲԵՐԱԲԱԿԱՅԱ	15 կ.		
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐ (Կոմս. հմլ.), ՍԱՄՎԵՐՎԱՆԱԿՈՎ, ԱՐԱԿ I.	50 կ.		
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐ	"	ԱՐԱԿ II.	50 կ.
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐ	"	ԱՐԱԿ III.	50 կ.
ՄՈՐԴՈՒ և ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՄԱՅՈՒՄԸ, —Դ. Ս.ԳՈՒ	35 կ.		
ԻՆՉՊԵՍ և Ա.Ո.Ա.Զ. և ԶԱՐԴ. ԿՅԱՆՔԸ ՅԵՐԿՐԻՎ ՎՐԱ, Մ.ԳՐԵՄԻՋՎԿԻ	50 կ.		
ԻՆՉՊԵՍ և ՍԱՐՔՎԱԾ ՏԻՅԵԶԵՐՔԸ, ԱԼԱԳԵՄԻԿՈՍ Դ. ԳՐԱՎԵ	50 կ.		
ՎՈՐՈՇ, ԿԱՅԵՎԱԿ և ԵԼԵՔՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, Մ. ԳՐԵՄԻՋՎԿԻ	40 կ.		
ԱՐԵՎԸ, ՆԱԾ. ՎՈՐԴԻՆԵՐԸ և ԹՈՈՆԵՐԸ, —Բ. ՍԱՄԵԼԻՆ	40 կ.		
ՄԱՐԴՈՒ ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ԴՇԱՄԱՆԵՐՆ ՈՒ ԲԱՐԵԿԱՄԱՆԵՐԸ,	15 կ.		
ՄԱՐԴԿԱՅԻ ԲՆԱԿԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ, —Վ. ՅԱՎՈՒՅԿԻ	15 կ.		
ԹԵ ԻՆՉՊԵՍ ԿԱՐԵԼԻ ՅԵ ԳՅՈՒՂ. ԵԼԵՔՏՐԱԿԱՆՈՒԹ. ԱՆՑԱԿԱՆԵԼ	20 կ.		

ՏԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ և ՄՆԱՀԱՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԸ,—Պ. ԴԺԱՐԻԿԵԼԻ	15 կ.
ԳԵՂ ԿԱՆԳՆԻ—ԳԵՐԱՆ ԿԿՈՏՐԻ (կոռպերացիան գյուղում), լ. ի.	30 կ.
ԱՍՏԾՈՒ ԿԱՄՔԸ, ԹԵ ԳՅՈՒՂԱԾՆԸ. ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԸ,—Ի. Պ.	20 կ.
ԳՅՈՒՂԱԾՆԱԿԱՆ ՀՈՂԱՇԽԱԾՈՒՐԱՐՈՒԹ. ԱՅԲՈՒՔԵՆՆԸ	30 կ.
ՀՈՂԻ ՄՇԱԿՈՒՄԸ ՅԵՐԱՇՏԻ ԺԱՄԱՆԱԿ, —Պ. ՎԼԱՍՈՎ,	40 կ.
ԳՅՈՒՂԱԾՆԵԿԱՆ ՀԱՐԿԸ,—Մ. ԼԻՎԻԿԱԼԻ	20 կ.
ԱՐԱՋԻՆ ՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՎԱՅՐ ԿԵՆԴՐԱՆՈՒՆ,—Ա. ՍԿՈՄՈՐԿՈՎ	17 կ.
ԷՆՏԱՆԻ ԿԵՆԴՐԱՆԵՐԻ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	17 կ.
ԻՆՉՊԵՍ ՀՆՏՐԵԼ ԿԱԹԱՆԱՌԱ ԿՈՎ,—Բ. ՍԿՈՄՈՐԿՈՎ	12 կ.
ԹԵ ԻՆՉՊԵՍ ԳԵՐՄ. ՍՏԻՊԵՅ, ՎՈՐ ԿՈՎԸ ՏԱՐԻՆ 2 ԱՆԳԱՄ ԾՆԻ.	15 կ.
ԽՈԶԸ ԳՅՈՒՂԱՑՈՒ ԿԵՐԱԿՐՈՂՆ Ե, —ԼԻԽԱՀԿ	18 կ.
ՄՈՐ ԱՅԲԵՆԱՐԱՆԸ,—Պ. ՎԱԿԵՐԱՆԱԿԻ	16 կ.
ՅԵՐԵՆԱՆԵՐԻ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ,—Բ. ԳԻՆԱԲՈՒՐԳ	30 կ.
ՔՈՍ, և ԻՆՉՊԵՍ ԿՈՎԵԼ ՆՐԱ. ԴԵՄ, —ԲԺ. ՆԱՊԻՐԻՆ	20 կ.
ՎԵՆԵՐԱԿԱՆ ԱԽՏԵՐ,—Պ. ԲՐՈՆՆԿԻ	25 կ.
ԹՈԲԱԿՆՏ, —Ն. ՍԻՆԱԶԿԻ	25 կ.
ԱՉԳԱՑԻՆ ՀԱՐՑԸ և ԴՐՈՑԸ,—Ն. ՏՅՈՒՐՅԱԿՈՎԿՈՎ	40 կ.
ԳՅՈՒՂԱՅ. ՊԱՀԱՆՁԵՆԵՐԸ և ԽՈՐՀՐԴ. ԴՐՈՑԻ ԾՐԱԳՐԵՐԸ	12 կ.
ԳԵՂՉԿՈՒՀԻՆ և ՅԵՐԵԿԱՆԵՐԸ	25 կ.
ՀԱՄԱՐԱԿԱԴԻՏՈՒԹՅՈՒՆ 1 Ա.ՍԻՀ, ԴՐՈՑՈՒՄ, Բ. ԺԱՎՈՐԿՈՎ	65 կ.
ՊԱՏԱՆԻ ՊԻՈՆԵՐ (ԺՈՂՈՎՃՈՆ)	60 կ.
ՊԻՈՆԵՐ, ՊԱՀՊԱՆԻՐ Ա.Ո.Ջ.ՋՈՒԹՅՈՒՆՆԴ, —ՅԵ. ՌԱՊԻՆ	10 կ.
ՊԻՈՆԵՐ ՀԵՏԵՎԻՐ ԼԵՆԻՆԻ ՊԱՏԳԱՄՄԵՐԻՆ	15 կ.
ԼԻՆԻՆՔ Ա.Ո.Ջ.Ջ և ՈՒՃԵՂ, —Ն. ՖԱՋԻԼԻՆ. մաս I,	40 կ.
ԼԻՆԻՆՔ Ա.Ո.Ջ.Ջ և ՈՒՃԵՂ. „ „ մաս II,	45 կ.
ՄԵՐ ԱՎԱՐ ՅԵՂԲԱՅՐՆԵՐԸ—ԿՈՄՅԵՐԻ ՏԱԿԱՆՆԵՐԸ	20 կ.
ԹԵ ԻՆՉՊԵՍ ՍԱՔՈՒ ԿԱՐՄԻՐ ԲԱՀԱԿԱՑԻՆ ԴԱՐՁԱՎ—ԿՐԱՎՀԱԿՈ	35 կ.
ԿԱՐՄՐԱՄՈՒՐԹՆԵՐԸ,—Պ. ԽԵԲԱՆԿՈՎ	45 կ.
ՅԵՐԿՐԻ ԽՈՐՔԵՐՈՒՄ, —Ա. ԿՈՎԱՐԻՆ	18 կ.
ՔԻՄԻԿՈՍ ԿՈՒԶԿԱՆ, —Պ. ՈՐԼՈՎԻՑ	28 կ.
ՀԱՄԲՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԱՅԵՐՈՊԼԱՆՎՈ—Պ. ՈՐԼՈՎԻՑ	22 կ.

ՄՈՄՊԿԻ և ԱՐՁԻ ՄԱՍԻՆ (ՀԱՔԻՄԻ) — Դ. ՄԱՄԻՆ-ՍԻՐԻՔՅԱԿ	15 կ.
ԻՆՉՊ. ԵՅԻՆ ԱՊՐՈՒՄ ՏԻԿՆԻԿՆԵՐԸ և ԻՆՉ ԱՐԵՑ ԱՐՁԻՑ ԶԻՆՈՈՐԸ	16 կ.
ՄԻԿԵՆԱՏՐ ՄԵԿ ԺԱՄՈՎ, —ՖՐ. ՖՈԿԱ	18 կ.
ԱՆՁՆՎԵՐ ՏՂԱՆ, —ԵԼՄԱՆՊՈ ԴԱՄԻՔԻ	12 կ.
ՓՈՔՐԻԿ ՀԵՐՈՍՈՒՀԻՆ, —ՌԱՋՊԱ	12 կ.
ԹԻՇՈՒՆՆԵՐ (գունատիզ այլբում յերեխաների համար)	25 կ.
ՅԵՐԵՆԱՍԱՐԴ ԳՐՈՂԸ, ՄԱՐԴԸ, —ՄԱՔԱԻ ԳՈՐԿԻ	15 կ.
ՊԱՏՎԱԾԱՐՔՆԵՐ, —Ա. ՍԵՐԱՓԻՄՈՎՀ	45 կ.

ՑՊԱԳՐՎՈՒՄ ԵՎ ՅԵՎ. ՊԱՏՐՈՍՎՈՒՄ ԵՎ ՑՊԱԳՐՈՒԹՅԱՆ
Հ Ա Ս Ս Պ

ՀՄ. ԿՈՄ. ԿՈՒ.Ս. (Պ) ՀԱՄԱՐՈՍ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ (10 մամուլ)
ՊԱՏՄԱԿԱՆ ՄԱՏԵՐԻԱԼԻՄՄ (քրիսթոնատիա, 15 մամուլ)
ՀՈԿՏԵՄՐԵՑԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՐԳԻՔԻԲ (10 մամուլ)
ԽԱՀՄ ՅԵՎ ԱՐԵՎԵԼԻՔԻ ԺՈՂՈՂՈՒՐԴՆԵՐԸ
ԿՈՄՅԵՐԻ ՏՄՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԳՅՈՒՂՈՒՄ
ՀԱԿՅԱՄ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ
ՖԻՇՈՒՄ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ
ՈԱԴԻՆ

ՅԵՎ ՈՒՐԻՇ ԳՐԲԵՐ

ՊԱՐԱՆՁԵՑԵՔ

Մեր հրատակությամբ լույս տեսած հայերեն
գրերի լրիվ յեկ մանրամասն ցուցակը առան-
ձին գրելով, վոր ուղարկվում է ձրի:

Москва, Никольская, 10
Центриздат. Армянская Секция

«Ազգային գրադարան



NL0191434

